ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

(երրորդ մոնիթորինգի արդյունքներ)

Երևան 2020

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.0
Մ 228

Ծրագիրը իրականացվել է Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն հասարակական կազմակերպության կողմից:
www.acgrc.am

Մ 228 ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ (երրորդ մոնիթորինգի արդյունքներ).- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 80 էջ:

«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2019 թվականի հոկտեմբերից դեկտեմբեր ամիսների ընթացքում անցկացրել է ինչպես ռուսական, այնպես էլ հայկական զանգվածային լրատվության միջոցների և էլեկտրոնային պարբերականների ընտրված ծրագրերի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով ուսումնասիրել թե ինչպես են լուսաբանվում, ինչ հնարավոր որակումներ են օգտագործվում և ինչ հնարավոր ողողոդիչ տեղեկատվություն է տրամադրվում լայն լսարաններին ռուսական և հայկական լրատվական և տեղեկատվական միջոցների և կայքերի գործունեության արդյունքում:

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.0

ISBN 978–9939–75–484–0

© Էդիթ Պրինտ, 2020
© ԳՏՀՎԿ, 2018, www.acgrc.am

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն հ/կ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ (Հայաստան, երրորդ մոնիթորինգի արդյունքներ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ 5

II. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

III. ՄՇՏԱԴԻՐՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

IV. ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՐՏԱՐԿՈՒՄԸ 11

4.1. «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ» 11
4.2. «Հարցազրույց Ազնեսա Խամոյաի հետ» 26
4.3. «Հայելու առաջ» 32
4.4. «Օրահնդիր» 38
4.5. «Տողերի արանքում» 43
4.6. «Խոսքի ազատություն» 45
4.7. «Հարցազրույց» 46

V. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԸ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՈՂ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ 50

5.1. Հայ-ռուսական եվ հայ-ամերիկյան հարաբերությունները 50
5.2.ԼԳԲՏ համայնքի իրավունքները եվ հանրային վերաբերմունքը 53
5.3.Բաց հասարակության հիմնադրամների-Հայաստան նկատմամբ վերաբերմունքը ... 56
5.4 Սոցիալական ցանցերի կեղծ օգտատերերը 59
5.5Ստամբուլյան կոնվենցիայի հանդեպ հանրային վերաբերմունքը 60
5.6. Քաղաքական անհանդուրժողականությունը 62

VI. ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ 64

6.1. «Առավոտ» օրաթերթ 64
6.2. «Իրավունք» եռօրյա թերթ 65
6.3. Հրապարակ օրաթերթ 67
6.4. «Հայկական ժամանակ» օրաթերթ 69

6.5. «Իրատես» երկօրյա թերթ *72*
6.6. Ամփոփում *77*

VII. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 76

VIII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 77

I. ՆԱԽԱԲԱՆ

«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2019 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբեր 1-ն ընկած ժամանակաշրջանում անցկացրել է ինչպես ռուսական, այնպես էլ հայկական զանգվածային լրատվության միջոցների և էլեկտրոնային պարբերականների ընտրված ծրագրերի և տեղեկատվական հրապարակումների մշտադիտարկում՝ նպատակ ունենալով ուսումնասիրել թե ինչպես են լուսաբանվում, ինչ հնարավոր որակումներ են օգտագործվում և ինչ հնարավոր ուղղորդիչ տեղեկատվություն է տրամադրվում լայն լսարաններին ռուսական և հայկական լրատվական և տեղեկատվական պարբերականների, հեռուստածրագրերի և կայքերի գործունեության արդյունքում: Ինչպես նաև դիտարկել, թե ինչպիսի հնարավոր ազդեցություն է ունենում ռուսական զանգվածային լրատվությունը հայկական մամուլի վրա:

Սույն ծրագրի այս փուլի իրականացմանը նախորդել են ևս երկու մշտադիտարկման ժամանակահատվածներ, որոնք ներառել են 2017 թվականի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը և 2018 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 1-ը: Նշված ժամանակահատվածում մշտադիտարկման են ենթարկվել Ռոսսիա 1 ալիքով և Ռուսական առաջին ալիքով հեռարձակվող «Ժամանակը ցույց կտա», «60 րոպե» և «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ», ինչպես նաև 5-րդ ալիքի (Արարատ հեռուստաալիքը վերանվանվել է 5-րդ ալիք) «Երեկոն Ագնեսա Խամոյանի հետ» հեռուստածրագրերը, «Առավոտ», «Հրապարակ», «Հայոց աշխարհ» օրաթերթեր, «Իրատես» երկօրյա, «Իրավունք» եռօրյա թերթեր, ինչպես նաև մի շարք էլեկտրոնային կայքեր և սոցիալական հարթակներ: Սույն տևական մշտադիտարկման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր հաջորդ տարվա արդյունքներն ամփոփվել են նախորդի հետ համադրության լույսի ներքո՝ ընդգծելով կրկնություններն ու զարգացումները: 2019 թվականի մշտադիտարկման թիրախում, այնուամենայնիվ հիմնականում բացառվեց ռուսական հեռուստատեսության մշտադիտարկումը, քանի որ ակնհայտ դարձավ, որ երեք տարի շարունակաբար իրականացված դիտարկումների արդյունքները հստակ խոսում են այն մասին, որ ռուսական թիրախային մամուլը շարունակում է կենտրոնացած մնալ Ուկրաինայի վրա, երբեմն որոշակի առանձին անդրադառնալով Հայաստանին, սակայն լայնածավալ ռուսական պրոպագանդայի տարածում հայկական ԶԼՄ-ներով չի արձանագրվել, իսկ դրան զուգահեռ, ցավալի է, սակայն Հայաստանի ներսում հենց աճել է ատելության խոսքի, պիտակավորման և ուղղորդված քարոզչության կամ հակաքարոզչության տարածումը:

II. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

N	ԵԶՐՈՒՅԹԸ, ՀԱՊԱՎՈՒՄԸ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
	Մշտադիտարկում, մոնիթորինգ	Որոշակի վիճակի կամ պայմանի ապահովման վերահսկողության, որակի գնահատման նպատակով դիտարկում
	ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց (ներ)
	Ուղղորդված տեղեկատվություն	Որպես կանոն միակողմանի, ոչ լիարժեք, երբեմն ոչ ճշմարտացի հանրային հստակ վերաբերմունք դրսևորելու նպատակով տարածվող տեղեկատվություն
	Ատելության խոսք	Ատելության խոսք,հանրային (հասարակական) խոսքի դրսևորում, որն արտահայտում էատելությունկամ խրախուսում է բռնություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ՝ պայմանավորված այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսին են անձի այլակարծությունը, սեռը, կրոնական պատկանելությունը, էթնիկական խումբը, գենդերային ինքնությունը և այլն
	ԵՄ	Եվրոպայի Միություն
	ԵԱՏՄ կամ ԵՏՄ	Եվրասիական Տնտեսական Միություն
	Քարոզչություն կամ պրոպագանդա	Պրոպագանդան, որը ժամանակակից քաղաքական դիսկուրսում հասկացվում է որպես տեսակետների, փաստերի, փաստարկների և այլ տեղեկատվության բաց տարածում, այդ թվում՝ դիտավորյալ խեղաթյուրված և մոլորեցնող, հասարակական կարծիք կամ վերաբերմունք ձևավորելու համար
	ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն
	ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
	ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
	ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
	ի.գ.թ	Իրավաբանական գիտությունների թեկնածու
	ԼԴՊՐ	Ռուսաստանի Լիբերալ-Ժողովրդավարական կուսակցություն
	ՀԿ	Հասարակական կազմակերպություն
	ՀՀ ԱԺ	Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով

ՀՀԿ	Հայաստանի Հանրապետական կուսակցություն
ՔՊ	Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն
ԲՀԿ	Բարգավաճ Հայաստան կուսակցություն
ԼՀԿ	Լուսավոր Հակաստան կուսակցություն
ԼԳԲՏ	Լեսբուհի,Գեյ,Բիսեքսուալ և Տրանսգենդեր
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ՍԴԿ	Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԱՏՁՄ	Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն
ՋՈՒ	Զինված ուժեր
CSF	Քաղաքացիական հասարակության համաժողով
NED	Ժողովրդավարության ազգային հիմնադրամը
ISNA	Iranian Students' News Agency
ԻՊ	Իսլամական պետություն
ԱԻՄ	Ազգային միասնություն կուսակցություն
ԳՏՀՎԿ	Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ՍԱՊԾ	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
ՀՀ ԿԳՄՄՆ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի նախապատրաստական փուլում նախնական մշտադիտարկման են ենթարկվել մի շարք հեռուստաալիքների լրատվական թողարկումներ՝ թիրախավորելու համար հիմնական այն աղբյուրները, որոնք տրամադրում են այնպիսի տեղեկատվություն, որը կարելի է որակել որպես քարոզչական: Արդյունքում դիտարկվել են ստորև նշված հեռուստաալիքներով հեռարձակվող հիմնական լրատվական թողարկումները.

- Հայաստանի հանրային հեռուստաընկերություն(Առաջին ալիք)
- Հայկական երկրորդ հեռուստաալիք կամ h2
- Կենտրոն, հայկական հեռուստաընկերություն
- ԱրմՆյուզ, հայկական հեռուստաընկերություն
- Շանթ, հայկական հեռուստաընկերություն
- Երկիր Մեդիա, հայկական հեռուստաընկերություն
- 5-րդ ալիք, հայկական հեռուստաընկերություն
- Ռուսական առաջին ալիք
- Ռոսսիա 1 ալիք

Վերոհիշյալ աղբյուրների դիտարկումը բացահայտել էր, որ դիտարկված գրեթե բոլոր ալիքներով հեռարձակվող ծրագրերի ընթացքում էլ օգտագործվում են պիտակավորող եզրույթներ և ուղորդված տեղեկատվություն տարածվում է, սակայն հիմնականում առավել ցայտուն ուղղորդված քարոզչական և պիտակավորող տեղեկատվություն պարունակող ծրագիր առկա են ԱրմՆյուզ, 5-րդ ալիք հեռուստաընկերության և Ռոսսիա 1 ալիքի եթերում, Ռուսական առաջին ալիք: Հետևաբար որոշում էր կայացվել, 2019 թվականի նոյեմբեր 1-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանում հիմնական և շարունակական մշտադիտարկման ենթարկել վերոհիշյալ երեք հեռուստաալիքների հեռարձակած տեղեկատվական ծրագրերը:

Այդ հեռուստածրագրերն են Ռուսական առաջին ալիքով հեռարձակվող «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ», 5-րդ ալիքով հեռարձակվող «Հարցազրույց Ագնեսա Խամոյանի հետ», ԱրմՆյուզ հեռուստաալիքով եթեր թողարկվող «Օրախնդիր», «Տողերի արանքում» և «Հայելու առաջ» ծրագրերը, ինչպես նաև «Առավոտ», «Հրապարակ», «Հայկական ժամանակ», «Իրավունք», «Իրատես» թերթերը, Yerevan.Today էլեկտրոնային լրատվականի «Խոսքի ազատություն» և «Հարցազրույց» հաղորդաշարները, ինչպես նաև մի շարք սոցիալական հարթակներ:

	Անվանումը	Հեռարձակող ալիքը կամ տարածման եղանակը	Քանակը
1	«Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ»	Ռուսական առաջին ալիք	21
2	«Հարցազրույց Ագնեսա Խամոյանի հետ»	5-րդ ալիք	20
3	«Օրախնդիր»	ԱրմՆյուզ հեռուստաալիք	16
4	«Տողերի արանքում»	ԱրմՆյուզ հեռուստաալիք	5
5	«Հայելու առաջ»	ԱրմՆյուզ հեռուստաալիք	18
6	«Հարցազրույց»	Yerevan.Today էլեկտրոնային լրատվական	12
7	«Խոսքի ազատություն»	Yerevan.Today էլեկտրոնային լրատվական	5
8	«Առավոտ»	Տպագիր մամուլ	22
9	«Հրապարակ»	Տպագիր մամուլ	22
10	«Հայկական ժամանակ»	Տպագիր մամուլ	22
11	«Իրավունք»	Տպագիր մամուլ	12
12	«Իրատես»	Տպագիր մամուլ	8

Տվյալ մշտադիտարկման նպատակն է եղել ուսումնասիրել թե ինչպես է իրականացվում պրոպագանդան ռուսական հեռուստաեթերով և թե արդյոք այն արտահայտվում հայկական եթերում, ինչպես նաև Հայաստանում առկա քարոզչության, հակաքարոզչության, պիտակավորող արտահայտությունների կիրառման տարածվածության աստիճանը վեր հանելը: Հատկանշական էր դիտարկել թե մասնավորապես ինչ թեմա-ներն ու խնդիրներն են հայտնվում պրոպագանդայի և ուղղորդվող տե-ղեկատվության տարածման կենտրոնում և ինչ տերմինաբանությամբ են դրանք մատուցվում հանրությանը: Միևնույն ժամանակ առանցքային էր դիտարկումն այն մասին թե արդյոք մեկ տարվա ընթացքում որևէ բան փոխվել է ընտրված հեռուստաեթերներում և եթե փոխվել է ապա ինչ:

Այդ իսկ նպատակով մշտադիտարկում իրականացնող անձանց հա-մար մշակվել էր հարցաշարեր և գործողության ուղեցույց, համաձայն որի մշտադիտարկողը պարտավոր է դիտարկել յուրաքանչյուր օրվա

հաղորդումը, դուրս գրել այդ հաղորդման թեման, հյուրերին ու նրանց պաշտոնները, վերջիններիս կողմից որպես պիտակավորում օգտագործված արտահայտություններն ու եզրույթները:

Հետագայում ամփոփողը վերլուծել է, թե մեկ ծրագրի շրջանակներում միևնույն թեմային քանի անգամ է անդրադարձ կատարվել, նույն անձը քանի տարբեր հաղորդումների է մասնակցել, որոնք են առավել հաճախ կրկնվող արտահայտություններն ու կարծիքները, որոնք հրամցվում էին լսարանին և վերջում կատարվում է ամփոփում՝ ներկայացնելով այն հիմնական դրույթները, մտքերը, որոնց տարածմամբ զբաղվել է տվյալ հաղորդաշարը: Նույն ժամանակ համեմատականներ են տարվում ի ցույց դնելու համար թե արդյոք այս հետազոտության ժամանակ հավաքագրված տեղեկությունները տարբերվում են նախորդ տարի հավաքագրված տեղեկություններից:

Անհրաժեշտությունից ելնելով, տարվել են նաև զուգահեռներ՝ հայաստանյան և ռուսական ՋԼՄ-ների կողմից իրականացվող քարոզչության վերաբերյալ՝ ցույց տալու համար թե ռուսական եթերով տարածվող և քննարկվող թեմաները որքանով են արտացոլվում հայկական լրատվական դաշտում:

Մշտադիտարկողն ամենօրյա ռեժիմով դիտել և ընթերցել է նշված լրատվության աղբյուրները, ամփոփել քննարկվող հիմնական թեմաները և անհրաժեշտության դեպքում դուրս գրել առանձին արտահայտություններ:

Մշտադիկտարկման համար ընտրվել է հինգ թեմա. հասարակական կազմակերպությունների գործունեության լուսաբանում, Արևմուտքի վերաբերյալ նյութեր, եվրոպական արժեքների վերաբերյալ նյութեր, ներպետական ընթացիկ զարգացումներ, ուկրաինական և սիրիական ճգնաժամերի վերաբերյալ նյութեր և ընդհանրապես ատելության խոսքն ու ատելության քարոզը: Մշտադիտարկումը իրականացվել է երեք հարթությունում. ընտրված թեմաների վերաբերյալ վերլուծություններ, հարցազրույցներ, անդրադարձ իրադարձություններին, լուրեր:

IV. ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

Այսպիսով ստորև ներկայացվում են մշտադիտարկման ենթարկված հեռուստահաղորդումների վերլուծություններն ըստ թեմաների, հյուրերի և օգտագործված արտահայտությունների:

4.1. «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ»

Մեկ ամսվա ընթացքում դիտարկված բոլոր 21 թողարկումները բացառապես նվիրված էին Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձություններին և խնդիրներին: Հաղորդումը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում հյուրերը քննարկում էին Նորմանդյան ձևաչափով նախատեսվող հանդիպումը, հողի վաճառքի մասին ուկրաինական նոր օրինագիծը, Ղրիմը, Դոնբասը և Մայդանը: Հաղորդման երկրորդ մասում Ռուսաստանի իրադարձությունների մասին մակերեսային կարճ քննարկում էր տեղի ունենում հատուկ հյուրի հետ, իսկ երրորդ մասում՝ անդրադարձ էր կատարվում նաև միջազգային ասպարեզում տեղի ունեցող իրադարձություններին:

*Ուկրաինան ներկայացվում է միայն բացասական կողմից և յուրաքանչյուր թողարկմանը տեսանյութեր են ցուցադրվում, որից հետո քննադատում և ծաղրում են Ուկրաինայի նախագահ Զելենսկոն և այլ քաղաքական գործիչներին՝ նշելով, որ նրանք «Սորոսիկներ» են (Сорос*ята*), պատկերացում չունեն երկրի մասին, սթափ չեն և տարօրինակ վարքագիծ ունեն:*

Հարկ է նշել, որ հրավիրված հյուրերն ու հաղորդավարը հաճախ օգտագործում են կրկնվող արտահայտություններ: Այսպես, օրինակ, խոսելով Ուկրաինայից, հիմնական շեշտադրումն այն է, որ Ուկրաինայի նախագահը դերասան է, այլ ոչ թե նախագահ, որ Ուկրաինան նացիստական գաղափարախոսությամբ, հանցագործ, աղքատ և կոռումպացված երկիր է, որի իշխանությունները սպանում և թալանում են ժողովրդին, որ Ուկրաինան օգտագործվում է Արևմուտքի կողմից և գլխացավանք է Եվրոպայի համար, որ թեև Ուկրաինան թշնամի է համարում Ռուսաստանին, այդուհանդերձ, ռուսները սիրում են ուկրաինացի ժողովրդին և պատրաստ են խաղաղություն հաստատել: Հաղորդավարը հաճախ թողարկումներին հիշեցնում է, որ չնայած Ուկրաինայում արգելված է իր հաղորդումը դիտել, մարդիկ դիտում են, իսկ իշխանությունները նույնիսկ գործ են հարուցել իր դեմ:

Հաղորդումներին հրավիրվում են մասնագետներ, ովքեր արտահայտում են պրոպուտինյան, հակաուկրաինական, հակաամերիկյան տեսակետներ, շատ հազվադեպ նաև հակապուտինյան, պրոուկրաինական տեսակետներ: Սակայն, կարծես հատուկ են ընտրվել այնպիսի անձինք, ովքեր հոետոր չեն,

հեշտությամբ մոլորվում են, երբ հակառակորդները փաստարկներ են առաջ բերում, թույլ են տալիս իրենց երկրի և անձի հանդեպ վիրավորանք կամ ծաղրանք հնչեցնել: Հաղորդման ընթացքում հակառուսական դիրքորոշմամբ ելույթ են ունենում հիմնականում երկու-երեք ուկրաինացի փորձագետներ, որոնք հաճախ բախվում են անհարգալից վերաբերմունքի:

Հաղորդմանը շատ հազվադեպ քննադատություն է հնչում նաև Ռուսաստանի քաղաքականության, Ռուսաստանում գործող հակաուկրաինական կամ հակաամերիկյան գրամադրվածության հասցեին, բայց նման ելույթները հիմնականում ընդհատվում են հաղորդավարի և պրոռուսական հռետորաբանությամբ ռուս և ուկրաինացի հյուրերի կողմից: Հաղորդավարը երբեմն շատ անհանդուրժողական է այլ կարծիք արտահայտող հյուրերի նկատմամբ, հաճախ կտրուկ ընդհատում է հյուրերին և սարկազմով արտահայտություններ է անում: Հակաարևմտյան հռետորաբանությամբ փորձագետներն իրենց կարծիքն արտահայտում են Արևմուտքի մասին Ուկրաինայի մասին քննարկումների շրջանակներում՝ շեշտելով, որ Ամերիկան ամեն հարցում խառնվում է, հենց Ամերիկան է Մայդան կազմակերպել Ուկրաինայում, Ամերիկան ստիպել է Եվրոպային սանկցիաներ կիրառել Ռուսաստանի դեմ և դիտարկում է Ռուսաստանը որպես ագրեսոր:

Հաղորդավարն իրազեկված է Ուկրաինայում կատարվող ցանկացած իրադարձության մասին, շատ ինքնավստահ է, ցանկացած պահի կարողանում է փոխել թեման և հակադարձ փաստարկներ ներկայացնել հյուրերին: Հաղորդավարի կարծիքով, Ռուսաստանից դուրս իր հաղորդումը չեն սիրում, որովհետև այնտեղ այլ կարծիք է հնչում:

Թիրախավորված ժամանակահատվածում հեռարձակվել և մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 21 հաղորդում, որոնց հիմնական **<u>թեմաներն են</u>** եղել.

1. Թողարկում **03.11.2019**[1]
   Թեմա՝ Ուկրաինայում կատարվող իրադարձությունները
2. Թողարկում **05.11.2019**[2]
   Թեմա՝ Ինչու՞ են Ուկրաինայում ատում ռուսերեն լեզուն
3. Թողարկում **06.11.2019**[3]
   Թեմա՝ Ուկրաինայի նախագահը տեղյակ չէ երկրի իրադարձությունների մասին: Ռուսները փոփոխություններ են ուզում երկրում

1 https://www.youtube.com/watch?v=k00jNT-Nmtw
2 https://www.youtube.com/watch?v=XvBm1D9z3Dk
3 https://www.youtube.com/watch?v=skgP9tJJ4eY

4. Թողարկում **07.11.2019**[4]
   Թեմա՝ Ուկրաինայի բնակչությունը, զինվորները
5. Թողարկում **10.11.2019**[5]
   Թեմա՝ Ներդրումներ Ուկրաինայում: Բեռլինի պատի անկման երեսուն տարին և ՆԱՏՕ-յի ուղեղի մահը, ինչպես ասել է Մակրոնը:
6. Թողարկում **11.11.2019**[6]
   Թեմա՝ Օրինագիծ Ուկրաինայում հողամասերի վաճառքի մասին: Սարսափելի սպանություն Սանկտ Պետերբուրգում
7. Թողարկում **12.11.2019**[7]
   Թեմա՝ Դեպի Նորմանդյան ֆորմատով հանդիպում: Ինչու՞ մահվան հասցրեցին «Սպիտակ սաղավարտներ» կազմակերպության հիմնադրին: Ո՞րն է դեմոկրատիան
8. Թողարկում **13.11.2019**[8]
   Թեմա՝ «Բարձրագույն Ռադան» ընդունել է հողերի վաճառքի մասին օրինագիծը: Ֆրանսիայում անցել է Փարիզի խաղաղության երկրորդ համաժողովը: Միջազգային համակարգի և համաշխարհային ժողովրդավարության ճգնաժամ
9. Թողարկում **14.11.2019**[9]
   Թեմա՝ Ռուսաստան և Ուկրաինա: Ռուսաստանը ռազմավարական գործընկեր է, թե՞ խնդիր. վիճում են Եվրոպայում
10. Թողարկում **15.11.2019**[10]
    Թեմա՝ Ռուսաստան և Ուկրաինա: Ռուսաստանը ռազմավարական գործընկեր է, թե՞ խնդիր. վիճում են Եվրոպայում
11. Թողարկում **17.11.2019**[11]
    Թեմա՝ Կկայանա՞ արդյոք Նորմանդյան ֆորմատով հանդիպում: Թրամփի իմփիչմենթը. Ի՞նչ է լինելու Ամերիկայի հետ
12. Թողարկում **18.11.2019**[12]
    Թեմա՝ Ուկրաինան պատրաստվում է Նորմանդյան ձևաչափով հանդիպմանը: Ռուսաստանի հետ պատերազմի սցենարները, որոնք մշակվում են արևմուտքում
13. Թողարկում **19.11.2019**[13]

---

4 https://www.youtube.com/watch?v=SSD20cDztvI&t=86s
5 https://www.youtube.com/watch?v=JA4ms9z3QvM
6 https://www.youtube.com/watch?v=3jv-h4EF5Yc
7 https://www.youtube.com/watch?v=LaGbFRDEHpI
8 https://www.youtube.com/watch?v=5ePQcFxBdYU
9 https://www.youtube.com/watch?v=puBR3iW0noA&t=9709s
10 https://www.youtube.com/watch?v=puBR3iW0noA&t=9709s
11 https://www.youtube.com/watch?v=x26BnKdi7N4
12 https://www.youtube.com/watch?v=tTELzVsz1YM&t=105s
13 https://www.youtube.com/watch?v=xzP_B0E-WqY

Թեմա՝ Ուկրաինա: Ինչու՞ է մտավորականությունը դադարել լինել ազգի խիղճը և չի արտահայտում մարդկանց շահերը. ազատ քննարկում

14. Թողարկում **20.11.2019**[14]
Թեմա՝ Ուկրաինա, Մինսկի համաձայնագրեր: ՆԱՏՕ-յի արժեքները և գործողությունները հակասում են միմյանց
15. Թողարկում **21.11.2019**[15]
Թեմա՝ Արևմուտք, Ուկրաինա, Մայդան: Ամերիկան ուզում է փրկել Բելառուսին ագրեսիվ Ռուսաստանից
16. Թողարկում **24.11.2019**[16]
Թեմա՝ Հոլոդոմորի հիշատակ: Ռուսաստանի հարկային համակարգը
17. Թողարկում **25.11.2019**[17]
Թեմա՝ Ամերիկա և Ուկրաինա: Ինչու՞ է կարևոր ծառայել ժողովրդին, այլ ոչ թե իշխել նրան
18. Թողարկում **26.11.2019**[18]
Թեմա՝ Ուկրաինան պատրաստվում է Նորմանդյան ձևաչափով հանդիպմանը և պահանջում է նավերից կորած զուգարանակոնքերը: Ատելություն ռուսների, հրեաների, մուսուլմանների նկատմամբ
19. Թողարկում **27.11.2019**[19]
Թեմա՝ Նորմանդյան ֆորմատով հանդիպման ժամանակ նախատեսվում է նաև Պուտին-Զելենսկի հանդիպում: Ինչու՞ է հասարակությունը ագրեսիվ դառնում
20. Թողարկում **28.11.2019**[20]
Թեմա՝ Ուկրաինան և Զելենսկու ռեյտինգը: Արևմուտքը կորցրել է երազանքը, փորձում է գտնել այն
21. Թողարկում **01.12.2019**[21]
Թեմա՝ Ուկրաինան Նորմանդյան գագաթնաժողովին: Մեծ սպորտին հերթական անգամ խառնվում է մեծ քաղաքականությունը

Դիտարկված 21 ծրագրերից բոլորում քննարկվում է (ծրագրի հիմնական մասում, ամբողջությամբ կամ մասնակիորեն) Ուկրաինան, մասնավորապես Զելենսկու անփորձության, Մայդանի և այլ հարցերի վերաբերյալ: Հատ-

14 https://www.youtube.com/watch?v=k8DFhwLBSXg
15 https://www.youtube.com/watch?v=e4SV4x3xZDw
16 https://www.youtube.com/watch?v=EZPOJOXIzHA
17 https://www.youtube.com/watch?v=R2vOvmnrb8U
18 https://www.youtube.com/watch?v=fvA0Ckthlfc
19 https://www.youtube.com/watch?v=TQtijH8Bac4
20 https://www.youtube.com/watch?v=65pU1o03V7g
21 https://www.youtube.com/watch?v=tt0gYIm_yaE&t=1s

կանշական է, որ 2018 թվականին դիտարկված 21 եթերներից 19-ն էին նվիրված Ուկրաինային, իսկ 2017 թվականի դիտարված 19 եթերներից միայն 7-ում էին անդրադառնում ուկրաինական թեմային:

Առանձնակի հետաքրքրական էր դիտարկել, թե ովքեր են լինում տվյալ ծրագրի **հյուրերը**, որոնց միջոցով հիմնականում իրականացվում էր քարոզչությունը: Այսպես, սույն հաղորդաշարին առավել հաճախ հրավիրվող, հայտնի, հյուրերի ցանկը և նրանց կողմից քննարկված թեմաները ներկայացվում են ստորև.

- Վակարով, Ուկրաինացի քաղաքագետ. 20 անգամ
- Կիլինկարով, ուկրաինացի հասարակական և քաղաքական գործիչ, Ուկրաինայի Բարձրագույն Ռադայի V-VII գումարման պատգամավոր. 15 անգամ
- Միրոշնիկ, Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության ղեկավարի խորհրդական. 13 անգամ
- Կեդմի, իսրայելցի պետական գործիչ. 13 անգամ
- Կորնիլով, «Россия сегодня» (Ռուսաստանն այսօր) միջազգային տեղեկատվական գործակալության քաղաքական դիտորդ. 13 անգամ
- Կուրղինյան, ռուսաստանյան քաղաքական գործիչ, վերլուծաբան, «Суть времени» (Ժամանակի էությունը) շարժման առաջնորդ. 9 անգամ
- Դոռբնիցկի, քաղաքագետ. 9 անգամ
- Ջլոբին, ամերիկացի և ռուս քաղաքագետ, Վաշինգտոնի «Գլոբալ շահերի կենտրոնի» (*Center on Global Interests*) նախագահ. 9 անգամ
- Կովտուն, ուկրաինական «Эксперт» (Փորձագետ) հասարակական գործընթացների հետազոտությունների կենտրոնի տնօրեն. 8 անգամ
- Սիդորով, Դեկան, Համաշխարհային քաղաքականության ֆակուլ-տետ, Մոսկվայի պետական համալսարան. 8 անգամ
- Օկարա, ուկրաինահ քաղաքագետ. 8 անգամ
- Շահնազարով, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, կինոռեժիսոր. 8 անգամ
- Սոսնովսկի, գերմանական «World Economy» առցանց ամսագրի գլխավոր խմբագիր. 7 անգամ
- Ստանկևիչ, «Партия Роста» (Աճի կուսակցություն) համառուսաս-տանյան քաղաքական կուսակցության միջազգային հարցերով

հանձնաժողովի նախագահ. 5 անգամ

- Վիտյազևա, «News Front» տեղեկատվական գործակալության դիտորդ. 6 անգամ
- Միխեև, քաղաքագետ. 6 անգամ
- Բոնդարենկո, Խոսքի ազատության կենտրոնի («Центр Свободы Слова») վերահսկիչ խորհրդի ղեկավար, Ուկրաինա. 6 անգամ
- Ուրալով «СОНАР–2050» վերլուծական նախագծի գլխավոր խմբագիր. 5 անգամ
- Կալաշնիկով, Անկախ պետությունների համագործակցության, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ հարաբերությունների պետական դումայի նախագահ. 5 անգամ
- Եվստաֆև, քաղաքագետ. 4 անգամ
- Վիշինսկիյ, «Россия сегодня» (Ռուսաստանն այսօր) միջազգային տեղեկատվական գործակալության գործադիր տնօրեն. 3 անգամ
- Ժիրինովսկի, ռուս քաղաքական գործիչ, Ռուսաստանի Լիբերալ–դեմոկրատական կուսակցության նախագահ (ЛДПР). 2 անգամ

Ուշագրավ է, որ հրավիրված նույն հյուրերն ու հաղորդավարները տարբեր եթերներում, հաճախ նաև խոսելով տարբեր թեմաների շուրջ օգտագործում էին հստակ կրկնվող և ընդգծված **արտահայտություններ ու տերմինաբանություն**: Այսպես օրինակ, խոսելով *Ուկրաինական թեմայից* հիմնական շեշտադրումներն ու տեղեկատվական հոսքն ուղղված էր հետևյալ մտքերի և եզրույթների հրամցմանը լսարանին.

- քաղաքացիները չեն հարգում նախագահ Զելենսկուն և պնդում են, որ վերջինս գաղափար չունի, թե ինչ է կատարվում երկրում: Իսկ Ուկրաինայի վարչապետը հիմարի նման է պահում իրեն:
- հենց ուկրաինացիներ չկան, լեզուն էլ ռուսերենն է, ուղղակի աղավաղված է: Ուկրաինացիները վախկոտ, անշնորհակալ, նվնվացող ազգ են, դժվար է նրանց անվանել մեծ ազգ: Ուկրաինացիներին ղեկավարում են ամերիկացիները, սակայն նրանք դա դեռ չեն հասկանում:
- առաջ Օդեսայի բնակիչներն ավերել են Ժուկովի (խորհրդային զորավար,Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության քառակի հերոս) հուշարձանը, ում ղեկավարությամբ պատերազմել է նաև Զելենսկու պապը: Երկրի նախագահը ոչ իր պապի հիշատակն է պաշտպանում, ոչ էլ ուկրաինացիների պատիվը:
- Զելենսկու ֆրակցիայի անդամները հումորներ են անում, որ ոչ թե

քաղաքական գործիչներ են հավաքվել ղեկավարելու երկիրը, այլ հարսանիքների նկարիչներ: Ինչպես են ապրում Դոնբասում, ոչ մեկի հետաքրքիր չէ:

- ինչ ներկայում սխալ է գնում, չունես դիպլոմ, բայց դառնում ես ղեկավար: Ուկրաինայի ղեկավարները չգիտեն, թե ինչի համար են հավաքվել: Հնարավոր է, որ նրանց հավանություն են տվել ամերիկացիները, հնարավոր է՝ Սորոսը և Պինչուկը, բայց այդ մարդիկ չեն կարող արդարացնել ընտրողների ակնկալիքները:
- թե ինչ կլինի, եթե դուք կորցնեք Ռուսաստանին, հետևեք Ձեր վիժվածքներին, որոնք հուշարձաններ են ոչնչացնում, նստացրեք նրանց բանտ և ազատեք երկիրը նացիստներից:
- միացել է Ռուսաստանին հենց իր խնդրանքով և թքած ունի ուկրաինական մարդասպան իշխանությունների վրա:
- հիմա կատարում է ծաղրածուի աշխատանք, շեղում է մարդկանց: Նա է Ուկրաինայի տերը, իսկ ո՞վ է տերը Զելենսկու:
- հուշարձաններ են կառուցում նացիստների հիշատակին:
- հիմարություններ է արել, որոնք Զելենսկին հիմա կարող է ուղղել:
- Ուկրաինայում արգելվում է ռուսերեն լեզվով խոսել, նման իրավիճակում հաշտությունը բացառվում է, կոնֆլիկտը զարգանում է քաղցկեղի նման:
- կարծում եմ, որ ես ավելի շատ բան գիտեմ Ուկրաինայի մասին, քան Զելենսկին: Նա այցելել է Խարկով քաղաքում Մալիշևի անվան տանկ արտադրող գործարան, և սարսափով իմացել է, որ 10 տարվա մեջ միայն 1 տանկ է արտադրվել: Բանակի համար նախատեսված գումարը տարիներով թալանվել է: Որտեղից են այսքան հիմարներ գտել, որ դնեն երկիրը կառավարելու: Դուք եք ընտրել Զելենսկուն որպես նախագահ (դիմում է ուկրաինացի ներկայացուցիչներին), վայելե՛ք նրա համերգները:
- չի ցանկանում իր խոստումները կատարել, այլ ուղղակի ժամանակ է շահում և լվանում է մարդկանց ուղեղները: Եթե չի կարողանում, ավելի վատ՝ թող իջնի գահից: Պորոշենկոն պետք է պատասխան տա սեփական երկրում ցեղասպանություն գործելու համար և պատժվի:
- վերականգնի Ուկրաինայի տնտեսությունը և հզորությունը, պետք է վերականգնվի նրա համագործակցությունը Ռուսաստանի հետ, այլկերպ անհնար է:
- ուղեղը դեռևս մթագնած է: Ուկրաինան միայն տարածքի մասին է մտածում, ուզում է օրինականացնել մարմնավաճառությունը, թմրա–

նյութերի օգտագործումը, վաճառել տարածքները եվրոպացիներին, իսկ մեզ հետ դա չի ստացվի:

- պաշտպանելու պաշտոնում է նշանակվել մի մարդ, ում ձեռքերն արյան մեջ են: Ուկրաինացիներն ասում են, որ մեկ զինվորի կյանքն ավելի կարևոր է, քան 100 բնակիչների կյանքը, իսկ ռուսական զորքերի համար առաջնայինը միշտ խաղաղ բնաչության անվտանգությունն է:
- Զելենսկին դուր է գալիս, բայց նա չի կարողանում ղեկավարել երկիրը: Կարող եմ ասել, որ դեբիլներին երկրի ղեկավարի օգնականներ նշանակելու ավանդույթը շարունակվում է Ուկրաինայում: Զելենսկին պետք է սկսի գործել, այլ ոչ թե մտածի բոլորին դուր գալու և նոբելյան մրցանակ ստանալու մասին:
- նախագահ է, իսկ Զելենսկին՝ դերասան:
- ղեկավարները հանցագործներ են և նրանց գլխավորում է Ավակովը (Ուկրաինայի ներքին գործերի նախարար): Նրա կողմից Անտոն Գերաշենկոյին լրագրողների անվտանգության հարցերով Ներքին գործերի նախարարության գործադիր ներկայացուցչի պաշտոնին նշանակելը, կարծես, չար ծաղրանք լինի:
- ժողովրդի փոխարեն կհանեի Պորոշենկոյի աչքերը, երբ նա այցելում է այն քաղաքներ, որտեղ իր պատճառով մարդիկ են զոհվել: Նա վաղուց պետք է բանտում նստած լիներ:
- որն է ամենահիդեալական երկիրը աշխարհում: Ուկրաինան: Այս հեքիաթը պատմել են ուկրաինացիները Կիևի տնտեսական ֆորումի ժամանակ, իսկ Զելենսկին կոչ է արել ներդրումներ կատարել: Ուկրաինան Եվրոպայի ամենաաղքատ երկիրն է, և այն ղեկավարում եմ Սորոսիկները և նացիստները:
- իրեն շատ է սիրում, շատ գոհ է ինքն իրենից: Մայդանը աշխարհաքաղաքական հականերդրումային ծրագիր էր, որը աղքատության հասցրեց Ուկրաինային և չթողեց, որ ներդրումներ լինեն և Ուկրաինան միանա Չինաստանին: Մայդանը թույլ չտվեց, որ լինի այն, ինչ չէին ուզում Ուկրաինայի Արևմտյան կուրատորները:
- իրական նախագահ այդպես էլ չդարձավ: Նա հորինում է հպարտանալու բաներ կամ հիշում է անցյալից, քանի որ հիմա Ուկրաինան հպարտանալու ոչինչ չունի:
- ներդրումների մասին է խոսքը նման իրավիճակում, երբ պատերազմ է գնում: Ուկրաինան կարողանում է միայն վաճառել, քանդել, ծախել: Ո՛չ Զելենսկին, ո՛չ նախկին հանցագործ նախագահներն իրավունք չունեն Դոնբասի ժողովրդի անունից ելույթ ունենալ և նրանց ճակատագիրը որոշել:

- քննարկելու է գյուղատնտեսական նշանակության հողերի վաճառքի մասին օրենքը: Զելենսկին որոշում է ընդունում, նոր հետո հարցնում ժողովրդին: Հիասքանչ տղա է (красавчик): Վաճառքի հարցը լուծված է, հիմա հարցը հետևյալն է՝ հողերի վաճառքը օտարազգիներին և հանրաքվեն: Որտեղի՞ց եք նման խաբեբա գտել: Զելենսկին ուզում էր հիշվել պատմության մեջ և այս քայլով էլ կհիշվի:
- խարդախ է և սրիկա, նա իդեալական ժամանակ է ընտրել երկիրը թալանելու համար, քանի որ ժողովուրդը աղքատ և ապատեղեկացված է: Սա դարի գողություն է: Ինչ վերաբերում է «ՆԱՏՕ-յի կոշիկներ»-ին (НАТО-вский сапог), եթե Ուկրաինան ուզում է պատերազմել, թող գնա ՆԱՏՕ:
- կարծում է, որ Նորմանդյան ֆորմատն իր գրպանում է, իսկ Մինսկի համաձայնագրերը կարելի է ջնջել: Ռադայում ոչ ստաբիլ հոգեվիճակով մարդիկ են հավաքվել:
- է, որ Դոնբասը Ուկրաինային պետք չէ, բայց դեռ խոսում են Ղրիմը վերադարձնելու մասին: Կարելի է արձանագրել որ Ուկրաինան Նորմանդյան ֆորմատով հանդիպմանը գնալու է առանց հստակ ծրագրի:
- պատկերացում չունեն, որ Ուկրաիանայում նացիստներ կան: Մարդիկ սկսել են հաճախ հիշել, որ Զելենսկին ազգությամբ ուկրաինացի չէ, այլ հրեա է:
- լավ խաբում է ժողովրդին, ասում է բոլոր հարցերը կլուծենք հանրաքվեի ժամանակ, միչդեռ, հանրաքվեի մասին օրենք այնտեղ գոյություն չունի: Զելենսկին այնպիսի որոշում կայացրեց, որ Դոնբասի ժողովուրդը ավելի ատի նրան:
- ես ամաչում եմ իմ հայրենակիցների ելույթներից: Ես դեմ եմ այս օրինագծին, Զելենսկին բացարձակ չի լսում ժողովրդին:
- փողոցներից 40-ը կրում են նացիստների, Բանդերա կազմակերպության և հրեաների դեմ ցեղասպանության կողմնակիցների անունները:
- է, ինչ պատասխանատու չկա Ուկրաինայի համար, մեկ ֆրանսիացիներն են այնտեղ խցկվում, մեկ ամերիկացիները կամ գերմանացիները:
- հավաքվել են լրիվ պատահական մարդիկ: Հիմա երիտասարդ վարչապետը երեխայի նման ուրախանում է օրինագծի համար և չի գիտակցում, որ դա իր վերջն է լինելու: Այս օրինագիծը Պորոշենկոյի երազանքն է եղել:
- խոստումներն աղքատության վերացման մասին անհեթեթություն են:

- ոչ ոք Եվրամիություն չի կանչում:
- բազմիցս ապացուցել է, որ Ուկրաինային չի սիրում:
- որոշ քաղաքական գործիչներին և Պորոշենկոյին ջայլամի կարգավիճակը դուր է գալիս: Իշխանությունները զզվեցրել են ժողովրդին իրենց որոշումներով, նացիոնալիզմով, ՆԱՏՕ-յին կամ Եվրամիությանն անդամակցելու ցանկությամբ:
- թիմում խաբեբաներ են:
- խնդիրներն սկսվել են այն ժամանակ, երբ ուկրաինացիների ուշքն ու միտքը դարձավ Եվրամիությունը, մտածեցին պոկել Ուկրաինան Ռուսաստանից: Ուկրաինայի ժողովուրդը հիասքանչ է, իսկ իշխանությունը՝ հիմար:
- հրավիրել է Մակրոնին Կիև, սիրում է եվրոպական լիդերներին հրավիրել, ուղղակի նրանք շատ չեն սիրում Ուկրաինա մեկնել:
- իշխանությունները տրոլինգ են անում բնակիչներին, իսկ քաղաքագետները ծաղրածուներ են:
- նույնիսկ եթե մյուս ուկրաինացիների նման մարիխուանա չի ծխում, ոչինչ չգիտի: Ուկրաինան ուզում էր Նորմանդյան ֆորմատի միջոցով վերացնել Մինսկի համաձայնագրերը և Ղրիմի հարցը բարձրացնել:
- Ուկրաինային պետություն չեմ համարում:
- ուզում է պաշտպանվել ուկրաինական ռադիկալներից, նացիոնալիստներից:
- է, Ուկրաինայում հոգեկան շեղումներով մարդիկ 3 անգամ ավելի շատ են, քան Ռուսաստանում:
- դեպուտատներից շատերը ոչ ադեկվատ հիմարներ են:
- մեկ է, ինչ կանի Ուկրաինան, կարևորը չսպանի մարդկանց և չկպնի Ուկրաինայի ռուսներին:
- ձեզ [ուկրաինացիներին] չի ուզում, դուք խայտառակություն եք: Դուք իսկապես հիմար եք, խաբում եք ձեր ժողովրդին, թալանում եք:
- նացիստ նողկանքներ են: Ոչ մի ռուս մարդ կամ լրագրող չի կարող վատ արտահայտվել ուկրաինացիների մասին և նրանց անվանել անասուն (сволочь), ինչպես ուկրաինացիներն են դա անում ռուսների նկատմամբ:
- նախարարներից շատերը ոչ ադեկվատ են, բուժվելու կարիք ունեն: Նոր հավաքված մարդիկ ամեն ինչից օգտվում են, թմրանյութերից, մարմնավաճառներից, շատերն էլ անկողնու միջոցով պաշտոն են ստանում:

- ոչինչ չի կարողանալու անել, կրկին նրա փոխարեն որոշում են կայացնելու:
- Ուկրաինան պետք չէ: Նույնիսկ Նորմանդյան ֆորմատով հանդիպումը Ռուսաստանին պետք չէ: Ակնհայտ է, որ Զելենսկին չի կատարելու Մինսկի համաձայնագրերը:
- մի մաս անասուն է:
- չենք կարողանում պայմանավորվել Ուկրաինայի հետ, հավատալ ֆաշիստ ուկրաինացիներին և հույս ենք կապում Ռուսաստանի հետ:
- են ուկրաինացիները միացնելու իրենց ուղեղը, նրանք հիմար են: Ճրբ է ժողովուրդը հասկանալու, որ անմեղ մարդկանց սպանել են, որ թալանեն երկիրը, դա աշխարհաքաղաքական պատվեր է եղել: Նրանք խաբեբա դավաճաններ են, որոնց անմեղ մարդկանց կրակելու համար շան նման պետք է սպանել:
- հետո մի շարք մարդիկ հայտնվեցին իշխանության գլխին, ովքեր պատկերացում չունեն երկրի մասին և մանկապիղծ են (педофил):
- տարիներով մշակված գործողություն էր, որպեսզի բաժանվեն Ռուսաստանը և Ուկրաինան: Ուկրաինան չի կարողանալու վերականգնվել: Երկրի գլխին կանգնած է ոչ կոմպետենտ մարդ, վարչապետը նացիստ համասեռամոլ է (нацист гомосексуалист), իսկ գաղափարախոսությունը Բանդերա կազմակերպության անասուն անդամների գաղափարախոսությունն է:
- ժողովուրդը խաբվեց արևմտյան սիրուն նկարներով կյանքին: Հեղափոխության իմաստը գիտեին միայն իշխանությունները, բայց կարողացան ներգրավել դրան բնակչության ռոմանտիկ զանգվածին:
- շահառուները շատ են՝ Ամերիկան, ով ասում է, թե ինչ անենք և ինչ ուտենք, Ֆրանսիան, Գերմանիան, Լեհաստանը:
- գլուխ շարունակում են մնալ նրանք, ովքեր ծախվել, կազմակերպել են Մայդանը: Նրանք են՝ Ավակովը, Կոլոմոյսկին:
- կործանվեց, երբ նրա գլուխ եկան բանդիտները: Ուկրաինայի նախագահն անհեթեթություն է**:**
- այսօր օգտագործում են, նա դարձել է ոչ միայն հակառուսական, այլ նաև հակաեվրոպական պրոեկտ:
- նախագահ դառնալով չդադարեց դերասան լինել: Նա պատրաստ է հիմար բան խոսել, միայն թե իրեն ծափահարեն:
- ինչ տեղի է ունեցել Ուկրաինայում տեղի է ունեցել Ամերիկայի թույլտվությամբ, ավելին՝ կարգադրությամբ:

- պատերազմում է Ռուսաստանի հետ, բայց կրակում է Դոնբասի քաղաքներին, վատ է վերաբերում Դոնբասի մարդկանց և թոշակառուներին:

<u>ԱՄՆ,</u> *<u>Եվրոպայի և ՆԱՏՕ-ի</u>* մասին խոսելիս հիմնական շեշտադրումները կատարվել են հետևյալ թեզերի վրա.

- քաոս է ստեղծել ԱՄՆ-ում, թուլացրել է երկիրը, դրա համար Ռուսաստանը նրան փոխարինում է Մերձավոր Արևելքում: Ռուսաստանը աշխարհաքաղաքական մրցակից է ԱՄՆ-ի համար: Թրամփը սիմպտոմն է այն հիվանդությունների, որն ԱՄՆ-ն վաղուց ունի:
- վերաբերում է 2020-ի ընտրություններին, ապա Թրամփը Ռուսաստանին հարմար չէ, բայց համեմատաբար չարի փոքրագույնն է մյուս թեկնածուների համեմատ: Ի տարբերություն Ջելենսկու, նա գիտի, թե ինչ է ուզում և հզոր է:
- է Թրամփի սերը նավթի նկատմամբ, ինձ մտահոգում է ավելի շատ ռազմական հոգեբանությունը: Ռուսաստանը միակ երկիրն է, որ կարող է հակահարված տալ ԱՄՆ-ին աշխարհագրության տեսանկյունից:
- ն ամեն երկրում էլ իր հետաքրքրությունն ունի, այն միայն իր շահերից ելնելով է գործում, բայց կարծում եմ, որ ԱՄՆ-ն չէր ցանկանա Ուկրաինայի նման աննշան երկրի գործերում այսքան երկար ժամանակ ներգրավված լինել: Թրամփին ձեռք չի տալիս Ուկրաինայի և Ռուսաստանի ընկերական հարաբերությունների վերականգնումը:
- պետք է հասկանա, որ ԱՄՆ-ի համար նա երբեք հարազատ չի լինելու:
- է Բոլիվիայի նախագահը, փաստացի դա արել է գունավոր հեղափոխությունը, Հոնկոնգում ցուցարարները մարդ են վառել: Դա՞ է դեմոկրատիան, դրա՞ն է կոչված Ամերիկան:
- մտածում է, որ միայն իրենց կարգն է ճիշտ, մնացած բոլորը սխալ են: Բոլորն էլ գիտեն, թե ով է սկսել անառակությունը (блудство) Ուկրաինայում:
- էգոիստ է, անկանխատեսելի է, և Թրամփը օգտագործում է Եվրոպան որպես առևտրային պրոեկտ, որին ուզում է իրեն հարմարեցնել:
- օրինակ, երբ Թրամփը Էրդողանի հետ վիճեց, ընդունեց հայերի ցեղասպանության բանաձևը, հիմա, երբ հարթվել են հարաբերությունները, վետո է դրել, հասկանու՞մ եք ամերիկյան ընկերությունը:

- դավաճան է:
- հիասքանչ դերասան է:
- էլիտաների միջև հակասություններ կան, երկիրը հեղափոխության շեմին է:
- Ամերիկայի նորմալ վիճակն է:
- թշնամի էր փնտրում և գտավ այդ դերում Չինաստանին: Ասում է, որ Չինաստանն ուրիշ է, կոմունիստական է, ուրեմն վատն է:
- Ռուսաստանի դեմ պատերազմի սցենար է գրում:
- երկու թշնամու անուն է տալիս՝ Ռուսաստանը և «Իսլամական պետությունը»: Ինչպես կարելի է Ռուսաստանը համեմատել ԻՊ հետ:
- իր թերությունները չի տեսնում, դրանցից շեղելու համար թշնամիներ է փնտրում: Իրականում, Ամերիկան նույնիսկ Իրանի դեմ հիմա չի կարող պատերազմել:
- մի հզոր պետության դեմ Ամերիկան չի պատերազմել: Որպես կանոն, նրանք պատերազմում են արդեն թուլացած երկրների հետ:
- ստրուկի տեղ են դրել ուկրաինացիներին, լարում եմ Ռուսաստանի դեմ և հրամայում են, թե ինչպես ապրել: ԱՄՆ կոնգրեսում բացահայտ ասում են, որ Ուկրաինան զենք է Ռուսաստանի դեմ, իսկ ուկրաինացիները շարունակում են հավատալ նրանց (целовать задницу): Ժամանակակից Ուկրաինան անամոթություն է, որը նացիստների և ծախու անասունների անունով է անվանում իր փողոցները:
- պետք չէ տնտեսապես զարգացած և միասնական Եվրոպան: Նրանք հիմա հակառակորդներ են: Ամերիկան ուզում է մասնատել Եվրոպան, ՆԱՏՕ-ն պետք չէ Ամերիկային:
- է ասում Ուկրաինային, թե ինչ անի: ՆԱՏՕ-ն շնորհավորել է Ուկրաինայի ազատության օրը: Այդ ինչի՞ց է ազատվել Ուկրաինան, ու՞մ հետ է պատերազմել, որ ազատվի: Ամերիկան է Ուկրաինայում նշանակել բոլոր պաշտոնյաներին: Ամերիկան Մայդան կազմակերպեց, որ Ուկրաինան Չինաստանի դարպասներ չդառնա:
- ուզում է ազատել Բելառուսը Մոսկվայի հսկողությունից: Մենք սիրում ենք Բելառուսը, միշտ լավ հարաբերությունների մեջ ենք եղել:
- ուզում է քարոզչություն տանել, ներկայացնելով, որ Ռուսաստանը ագրեսիվ նպատակներ ունի Բելառուսի նկատմամբ, որը խանգարում է երկրի ինքնիշխանությանը, բայց հենց Ռուսաստանի հետ

դաշնակից լինելու շնորհիվ է, որ Բելառուսը ինքնիշխան է:

- անամոթ է: Ամերիկայի ժամանակն անցել է, նա դատապարտված է անհաջողության:
- աշխատում է Բելառուսի երիտասարդ սերնդի հետ: Աստիճանաբար ռուսական հեռուստատեսությունը և մեդիան պակասում է, նույնիսկ այս հաղորդումն էին ուզում արգելել: Դա արվում է կոնկրետ Ռուսաստանի դեմ:
- Բելառուսը պետք չէ, նա ուղղակի վախենում է Սովետական միություն 2-ի ստեղծումից:
- ուժեղ Եվրոպան պետք չէ:
- ն Ռուսաստանին թշնամի է տեսնում, իսկ դուք ձգտում եք անդամակցել ՆԱՏՕ-յին, ոչնչացնում եք Ժուկովի անվան հուշարձանը: Դա անխելք քաղաքականություն է:
- յին անդամակցելու գործընթացը պարբերաբար ատելություն սերմանեց ուկրաինացիների և ռուսների միջև:
- օգնականն ասել է, որ ՆԱՏՕ-յին անդամակցելու Ուկրաինայի հարցը օրակարգում չէ, որովհետև Ուկրաինան կոնֆլիկտի մեջ է Ռուսաստանի հետ: ԱՄՆ-ն չի ցանկանում կոնֆլիկտի մեջ մտնել Ռուսաստանի հետ, Թրամփն էլ չի մոռացել, որ Ուկրաինան սկզբում չէր աջակցում իրեն:
- ուզում է, որ Ուկրաինան կոնֆլիկտի մեջ լինի Ռուսաստանի հետ:
- վերջերս ախտորոշել է ՆԱՏՕ-յի ուղեղի մահ, իսկ հիմա՝ միջազգային սկզբունքների ճգնաժամ: Մակրոնը վերջապես հասկացել է, որ Եվրոպան չի կարող որևէ բան սովորեցնել:
- մտածում է միայն նրա մասին, որ առաջ Ամերիկան լսում էր Եվրոպային, իսկ հիմա Ամերիկան թքած ունի Եվրոպայի վրա:
- հասկացա Մակրոնը ուզում է Նապոլեոն դառնալ, միավորել Եվրոպան, դրա համար ուզում է եվրոպական հայտնի քաղաքագետ կամ մտավորական դառնալ:
- շատ կեղծավորություն է անում, իսկ մենք նրան շատ գերագնահատում ենք:
- սովոր է թալանել: Քանի դեռ Եվրոպայում ոչ հայրենասեր ծախու էլիտան է գալիս իշխանության, նրանք կարողանալու են հաղթել Ուկրաինայի նման երկրների:
- և Ուկրաինան հակասեմիստական են:
- համար հիմա ռուսներն են հրեաների փոխարեն, նրանց հանդեպ ատելություն են սերմանում:

- քարոզում է պայքարել հակասեմիստության դեմ, որովհետև նրանք պարտական են հրեաներին: Բայց Գերմանիայում այնպիսի պայմաններ են ստեղծվում, որ հրեաներն իրենց վատ զգան:
- անկում է ապրում, Եվրամիության ճգնաժամը կապված է երազանքի բացակությամբ: Մակրոնն ասել է արևմտյան հեգեմոնիայի ավարտի մասին, Թրամփը մտահոգված է Եվրոպայի նկատմամբ վերահսկողությունը կորցնելու մասով, Մերկելն էլ ապշած է Մակրոնի նպատակներից:
- ուզում է լինել Թրամփ, բայց հնարավորություն չունի:
- կորցրել է քրիստոնեությունը, դրա համար էլ գաղափարախոսություն չունի:

Այսպիսով ամփոփելով այս մեկ ամսվա ընթացքում կատարված մշտադիտարկման արդյունքում դիտարկված եթերների շարքը, կարելի է միանշանակ հանգել այն եզրահանգմանը, որ հստակ լսարանին հրամցվում էին հետևյալ թեզերը.

1. Զելինսկին հրեա է, ուկրաինացի չէ, նա չի տիրապետում երկրում առկա իրավիճակին ու ի վիճակի չէ որևէ բան անել, նա միայն մտահոգվում է իր հեղինակության մասին:
2. Ուկրաինայում նացիստական կարգեր են:
3. Ուկրաինայի ներկայիս իշխանությունները անփորձ են ու չգիտեն ինչպես ղեկավարել երկիրը, նշանակված նախարարները վատ են անդրադարնում Զելինսկու հեղինակության վրա:
4. Ուկրաինական ժողովուրդն առանց Ռուսաստանի չի կարող ապրել:
5. Ուկրաինան գլխացավանք է ԱՄՆ-ի և Եվրոպայի համար:
6. Ուկրաինային ԱՄՆ-ն օգտագործել է որպես միջոց Ռուսաստանի դեմ:

Նախորդ տարիներին իրականացված մշտադիտարկման արդյունքում ամփոփելով եթերների շարքը, կարելի էր հանգել այն եզրահանգմանը, որ նախորդ ժամանակահատվածում տվյալ ծրագրի հեռարձակման ժամանակ հնչեցված հիմնական թեզերը եղել են հետևյալները.

2018 թվական

1. Պոռոշենկոն ադեկվատ չէ և երկիրը տանում է կործանման:
2. Ուկրաինայում նացիստական կարգեր են:
3. Ուկրաինայի ներկայիս իշխանությունները նշանակված են Արևմուտքի կողմից և երբ նրանք հեռանան իշխանութոյունից ռուս և ուկրաինացի ժողովրդների միջև նորից բարեկամական հարա-

բերություններ կհաստատվեն:
4. Ուկրաինական ընտրությունները ժողովրդին մոլորեցնելու համար է և իրականացվում են ամերիկացիների կողմից:
5. Ուկրաինան գլխացավանք է ԱՄՆ-ի և ԵՎրոպայի համար:
6. Ուկրաինային և ԱՄՆ-ին միավորել է Ռուսաստանի հանդեպ ատելությունը:

2017 թվական

1. ՌԴ նախագահ Պուտինը վայելում է Ռուսաստանի քաղաքացիների ճնշող մեծամասնության անսահման վստահությունն ու հարգանքը՝ բնութագրվելով անձնական և մասնագիտական բարձր որակներով:
2. Ռուսաստանի ներքին զարգացումը դրված է ճիշտ ուղու վրա Պուտինի արդյունավետ քաղաքականության շնորհիվ, և երկրում ակնհայտորեն դրսևորվում են տնտեսական աճի և ընդհանուր զարգացման նշանները:
3. ՌԴ-ն վերահսկում է խաղի կանոնները Մերձավոր Արևելքում և սահմանափակում է ԱՄՆ-ի ամբիցիաները:
4. Ղրիմը պատմականորեն պատկանում է Ռուսաստանին: Տեղի է ունեցել ոչ թե Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնակցում, այլ Ղրիմի ընդունում ՌԴ-ի տարածք իր իսկ խնդրանքով:
5. Ուկրաինան հանցագործությունների թվաքանակով առաջին տեղում է, ինչպես նաև Եվրոպայի ամենաաղքատ երկիրն է:
6. ԱՄՆ-ն չի հարգում ոչ մի պայմանավորվածություն, չի ենթարկվում ոչ մի միջազգային օրենքի, խառնվում է բոլոր երկրների ներքին գործերին:
7. Երեք տարիների ընթացքում իրականացված մշտադիտարկումը հստակ ի ցույց է դնում, որ Ուկրաինայի և ԱՄՆ վերաբերյալ փորձագետների դիրքորոշումները և հնչեցված կարծիքները մնացել են անփոփոխ:

4.2. «Հարցազրույց Ագնեսա Խամոյաի հետ»

Ինչպես և անցած տարի, մշտադիտարկման այս շրջանում ևս կարելի է արձանագրել, որ հաղորդումն ունի հիմնականում ընդգծված այսպես կոչված «ձևավորված վերաբերմունք» մի շարք հարցերի վերաբերյալ և հյուրերն ընտրվում են իշխանությանը հակադրվող կամ ընդդիմադիր ուժերից: Հաղորդման ընթացքում կարող է մեկ հարաբերականորեն «սուր» հարց հնչել, այն էլ դա որպես կանոն ոչ թե հեղինակի անձնական հարցն է, այլ հիմնված է լինում ինչ-որ կերպ ընդունված տեսակետի վրա: Հարցերը

նախապես պատրաստված են լինում, որից հեղինակը գրեթե չի շեղվում: Նախորդ տարվա համեմատությամբ այս տարվա դիտարկման արդյունքում կարելի է փաստել, որ ծրագրի կառուցվածքն ու հստակ ձևավորված դիրքորոշումը չեն փոփոխվել:

Թիրախավորված ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 20 հաղորդում, որոնց հիմնական **թեմաներն են** եղել.

1. Թողարկում **04.11.2019**[22]
   Թեմա՝ Ներպետական ընթացիկ զարգացումներ
2. Թողարկում **05.11.2019**[23]
   Թեմա՝ Հայոց արարման հավատք և կոնսոլիդացիա
3. Թողարկում **06.11.2019**[24]
   Թեմա՝ Ներպետական ընթացիկ զարգացումներ
4. Թողարկում **07.11.2019**[25]
   Թեմա՝ Երկրում ընթացող իրադարձություններ: Կրթության ու հայոց լեզու առարկայի դասավանդման մասին
5. Թողարկում **8.11.2019**[26]
   Թեմա՝ Երկրում ընթացող իրադարձություններ: Կրթության ու հայոց լեզու առարկայի դասավանդման մասին
6. Թողարկում **11.11.2019**[27]
   Թեմա՝ Երկրում ընթացող իրադարձություններ: Զրույցը Լավրովի Հայաստան կատարած այցի մասին է
7. Թողարկում **12.11.2019**[28]
   Թեմա՝ Երկրում ընթացող ներքաղաքական պրոցեսներ
8. Թողարկում **13.11.2019**[29]
   Թեմա՝ Կրթություն և մշակույթ: Ի՞նչ ունենք Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում

22 https://www.youtube.com/watch?v=P7M37eRTaFs&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=25&t=0s

23 https://www.youtube.com/watch?v=RiIFVMp5oMg&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=24&t=0s

24 https://www.youtube.com/watch?v=pLZNDNsh-Lw&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4l-RRNgm&index=23&t=0s

25 https://www.youtube.com/watch?v=fstkoGaYRh4&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=22&t=0s

26 https://www.youtube.com/watch?v=xt-rAqAiwok&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=21&t=0s

27 https://www.youtube.com/watch?v=ei7Be3eT6E8&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=20&t=0s

28 https://www.youtube.com/watch?v=jlIyYFqbeyw&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=19&t=0s

29 https://www.youtube.com/watch?v=xEX_V9wzW2g&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4l-RRNgm&index=18&t=0s

9. Թողարկում **14.11.2019**[30]
   Թեմա՝ Կրթություն և մշակույթ
10. Թողարկում **15.11.2019**[31]
   Թեմա՝ Կրթություն և մշակույթ
11. Թողարկում **18.11.2019**[32]
   Թեմա՝ «Վերնատան»-ը
12. Թողարկում **19.11.2019**[33]
   Թեմա՝ Ներքաղաքական, ընդդիմադիր ուժեր
13. Թողարկում **20.11.2019**[34]
   Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ, տնտեսական կանխատեսումներ և տնտեսության առկա վիճակը
14. Թողարկում **21.11.2019**[35]
   Թեմա՝ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականության մասին
15. Թողարկում **22.11.2019**[36]
   Թեմա՝ Ներկայիս քաղաքական վերլուծություններ
16. Թողարկում **25.11.2019**[37]
   Թեմա՝ Ներքին քաղաքականություն
17. Թողարկում **26.11.2019**[38]
   Թեմա՝ Ներքին քաղաքական զարգացումներ
18. Թողարկում **27.11.2019**[39]
   Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ
19. Թողարկում **28.11.2019**[40]
   Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ

---

30 https://www.youtube.com/watch?v=F-yPJLL02sM&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=17&t=0s

31 https://www.youtube.com/watch?v=_j6qa4mTwUg&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=16&t=0s

32 https://www.youtube.com/watch?v=twNS17xOJZU&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=56

33 https://www.youtube.com/watch?v=spB9PjX65sw&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=11&t=0s

34 https://www.youtube.com/watch?v=D5FQAupZlT0&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=55

35 https://www.youtube.com/watch?v=iK9OXLpk5Dw&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4l-RRNgm&index=54

36 https://www.youtube.com/watch?v=spB9PjX65sw&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=53

37 https://www.youtube.com/watch?v=IwgkfmCZNz4&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=10&t=0s

38 https://www.youtube.com/watch?v=R1fgqciiNUA&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=9&t=0s

39 https://www.youtube.com/watch?v=YSIjTVg2O1g&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=8&t=0s

40 https://www.youtube.com/watch?v=IfcnM_k9Luo&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-

20. Թողարկում **29.11.2019**[41]

Թեմա՝ Կամազների նվիրատվությունը պետք է ավագանու որոշումով լիներ.

Դիտարկված հաղորդումների հիմնական մասի թեմաները տվյալ պահին երկրում առկա խնդիրներին էին վերաբերում, ինչպես նաև Հայաստանի արտաքին հարաբերություններին: Հաղորդումների շատ փոքր հատվածն էր նվիրված ԱՄՆ-ին և Ռուսաստանին, որոնց ժամանակ ակնհայտ ընդգծված և լայնածավալ պրոպագանդա, ինչպես դիտարկված ռուսական հեռուստաալիքներով էր իրականացվում տեղ չի գտել, հիմնականում ծավալված քննարկումը եղել է Հայաստան-ԱՄՆ հարաբերությունների մասին:

Ի տարբերություն, ռուսաստանյան հեռուստաալիքների, դիտարկված հայկական ծրագրի հյուրերը բացառապես տվյալ հաղորդման քննարկման թեմայի հետ ուղղակի առնչություն ունեցող մասնագետներ, փորձագետներ կամ պետական պաշտոնատար անձիք էին և նույն հյուրը երբեք մի քանի տարբեր թեմաների քննարկմանը չի մասնակցել: Այսպես դիտարկված հաղորդումների **<u>հյուրերն</u>** էին.

- Հռիփսիմե Առաքելյան՝ Երևանի ավագանու անդամ, ԲՀԿ քարտուղար
- Հովհաննիսյան՝ «Այլընտրանքային նախագծեր խմբի ներկայացուցիչ»
- Սամսոնյան՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ
- Մինասյան՝ ՀՀԿ ԳՄ անդամ
- Ղարաբաղցյան՝ մտավորական
- Հակոբյան՝ նախկին պատգամավոր
- Շարմազանով՝ ՀՀԿ ԳՄ անդամ
- Բագրատյան՝ տնտեսագետ
- Սամսոնյան՝ քաղաքացիական գիտակցություն ՀԿ նախագահ:
- Թևանյան՝ Պոլիտէկոնոմիա հետազոտական ինստիտուտ
- Սահակյանց՝ կինոռեժիսոր
- Խաչատրյան՝ ՀՅԴ ԳՄ անդամ
- Էլիբեգովա՝ Ադրբեջանի հարցերով փորձագետ
- Բաբայան՝ Ռեֆրոմիստների կուսակցության նախագահ
- Ալավերդյան՝ նախկինում մարդու իրավունքների պաշտպան, իրավապաշտպան
- Մինասյան՝ ՀՅԴ ԳՄ անդամ

RNgm&index=7&t=0s

41 https://www.youtube.com/watch?v=AFNdigceG98&list=PLnu1d6PlghpSgWw4r9CaY9aQmR4lR-RNgm&index=48

- Ղազինյան՝ «Մեկ Հայաստան» կուսակցության նախագահ
- Աշոտյան՝ ՀՀԿ փոխնախագահ
- Այվազյան՝ Սահմանագրագետ՝
- Ավետիսյան՝ Համերաշխություն կուսակցության նախագահ:

Դիտարկելով այն **<u>ուղերձները</u>**, որոնք հիմնականում կարելի է որակել ուղղորդված քարոզչություն կամ ատելության խոսքի տարածում, մասնավորապես *<u>ներպետական և բաղաքական</u>* զարգացումների վերաբերյալ լսարանին մատուցվել է, որ.

- (հանդիսանում է Երևանի ավագանում «Իմ քայլը» խմբակցության քարտուղար, ով նաև «Հուզանք ու Ջանգ» ներկայացման մասնակիցն էր) չի եկել դեմ առ դեմ հանդիպման, քանի որ նրանք գերադասում են մնալ համակարգչի ետևում ու այնտեղից վիրավորական մեկնաբանություններ գրել:
- են, դրա հարամ էլ պայքարում են հայոց լեզվի դեմ:
- դարձել է քսակի պարունակություն:
- իրականությունը նմանվում է լավ բեմադրված թատրոնի:
- ժողովուրդը մատաղի կարգավիճակում է, չգիտի ուր է գնում:
- անամոթաբար լկտի ստեր է արտահայտում, երբեք չի նշել որ Արցախը չի լինելու Ադրբեջանի կազմում: Ես պաշտոնապես հայտարարում եմ, որ Փաշինյանը սուտ է խոսում:
- գլուխը պատով է տալիս, որ իր գործողությունները համեմատում է Հիսուս Քրիստոսի հետ: Նա պաթոլոգիա ունի:
- Հայաստանը ավելի վատն է խորհրդարանում որպես ընդիմություն, քան Օրինաց Երկիր Կուսակցությունն էր:
- հիվանդության հետևանք են և դառնում են նոր հիվանդության պատճառ:
- Նազարի սկզբունքով Փաշինյանին հաջողվել է վագրին թարս նստել և հայտնվել կառավարման բուրգի գագաթում:
- կռիվ է: Եվրոպական մշակույթը, որը գլոբալիզացիայի արդյունք է, փորձում է բոլորին հավասարացնել իրեն: Լիբեռալիզմի վերջը ֆաշիզմն է: Մենք որպես փոքր ազգ պիտի պահենք մեր արժեհամակարգը: Ծիծակ կոշիկ, ոջլոտ, փնթի հատկանիշները միտված են ազգային արժեհամակարգի քայքայմանը:
- ասեց, որ լափամանից զրկվել են մարդիկ, որոնք հիմա դեմ են Մելինե (Մել) Դալուզյանի մասին ֆիլմի նկարահանմանը: Նա պետական բյուջեն անվանեց լափաման: Ուշ թե շուտ այս մառազմը,

որ տիրում է Հայաստանում՝ կվերանա:

- որը օգտագործում էր տանիքներից խոսող ընդդիմադիր թեկնածուն, նույն անտաշ բառամթերքը չի կարող օգտագործել երկրի ղեկավարը:
- Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարար Արայիկ Հարությունյանը ցանկանում է դառնալ Փաշինյանի սիամական երկվորյակը:
- նախարարները բալաստն են, պիտի քաշեն խորտակեն Փաշինյանին:
- Հարությունյանի նպատակն է կոտրել հայկական ոգին՝ կրթության խեղաթյուրման միջոցով: Փաշինյանը իր վրա է վերցնում Արայիկ Հարությունյանի ապազգային պահվածքը: Այս նախարարությունը ստեղծված է, որ հարված հասցնի ողջ արժեհամակարգին: Այդ գործը գլուխ պիտի բերի Արայիկ Հարությունյանը: Ծրագիր է իրականացվում, որը դեմ է մեր ազգային կոդերին:
- ստեղծում է կեղծ ընտրություն մետրոյում թավալվող կապույտ մազերովների ու սատանիստներին մերժողների միջև, տրեխավորների ու այֆոնավորների միջև: Նիկոլ Փաշինյանը քաղաքական օլիգարխ է:
- չեն կարող մշակել ազգի զարգացման համապարփակ ծրագիր: Արայիկ Հարությունյանը համակարգային մակարդակով մեր երկրում ձևավորում է հակահայություն, հակաքրիստոնեություն... Օտար ուժերի պատվեր է այս ամենը կամ որ ավելի վատ է՝ մտածված: Ավելի լավ է մնալ հետամնաց ու ապրել բնական միջավայրում, քան լինել առաջադեմ ու գնալ կործանման:

Այսպիսով, ամփոփելով այս հաղորդաշարի մեկամսյա թողարկումները, կարելի է հանգել այն եզրահանգմանը, որ վերջինիս հաղորդումները հիմնականում արտացոլում են օրվա ընթացքում քաղաքական դաշտում քննարկվող խնդիրները՝ հիմնականում իշխանության ընդդիմախոսների շուրթերով՝ հիմնականում ներկայացնելով միակողմանի տեղեկատվություն: Ցավոք սրտի, դիտարկված հաղորդումների ինչպես հյուրերն այնպես էլ հաղորդավարները հաճախ ոչ թե քննադատում են իշխանության ներկայացուցիչներին, ինչը ողջունելի կլիներ, այլ երբեմն խեղաթյուրում են փաստերը, մանիպուլյացիաներ անում կամ ապատեղեկատվություն են տարածում իշխանության գործողությունների վերաբերյալ:

4.3. «Հայելու առաջ»

Այս հաղորդումն Անժելա Թովմասյանի հեղինակային ծրագիրն է, որի ժամանակ հեղինակն ունենում է մեկ կամ միանգամից մի քանի հյուրեր, որոնց հետ քննարկում է հաղորդմանը նախորդող օրերին երկրում ակտիվ քննարկվող հարցերը, որոնց ժամանակ հաղորդավարն ակտիվ իր դիրքորոշումն ու մոտեցումներն է հայտնում՝ նախապատրաստված հարցադրումների միջոցով:

Թիրախավորված ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 18 հաղորդում, որոնց հիմնական **թեմաներն են** եղել.

1. Թողարկում 01.11.2019[42]
   Թեմա՝ Նիկոլ Փաշինյանի քաղաքականությունը Արցախի դեմ է:
2. Թողարկում 05.11.2019
   Թեմա՝ Ինչպիսին է ներկայիս քաղաքականությունը: Ու՞ր է այն տանում:
3. Թողարկում 06.11.2019
   Թեմա՝ Սահմանադրական կարգի խախտումների մասին:
4. Թողարկում 07.11.2019
   Թեմա՝ Երկրում ընթացող իրադարձություններ:
5. Թողարկում 8.11.2019[43]
   Թեմա՝ Երկրում ընթացող իրադարձություններ:
6. Թողարկում 11.11.2019[44]
   Թեմա՝ Ռոբերտ Քոչարյանին (ՀՀ երկրորդ նախագահ, ով այժմ քրեական գործի շրջանակներում ներգրավված է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը: Նրա գործով դատաքննությունն այժմ ընթացքի մեջ է) էլ է հետաքրքրում, թե ուր է չորս միլիարդը:
7. Թողարկում 12.11.2019[45]
   Թեմա՝ Ներքաղաքական իրադարձությունների ընկալումը երիտասարդների մոտ:
8. Թողարկում 13.11.2019[46]
   Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ:
9. Թողարկում 14.11.2019[47]

---

42 https://www.youtube.com/watch?v=AwhXrtOQ2PM
43 https://www.youtube.com/watch?v=tRcCltkQSe8
44 https://www.youtube.com/watch?v=2Lfjbh7_8wk
45 https://www.youtube.com/watch?v=-9s48xdRyFs
46 https://www.youtube.com/watch?v=cqTs8gZ3QC0
47 https://www.youtube.com/watch?v=nfSTnGqfpoQ

Թեմա՝ ԱԺ-ում «Բարգավաճ հայաստանի» առաջացրած սին աղմուկի մասին է զրույցը:

10. Թողարկում 15.11.2019[48]
    Թեմա՝ Կրթություն և մշակույթ:
11. Թողարկում 19.11.2019[49]
    Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ:
12. Թողարկում 20.11.2019
    Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ
13. Թողարկում 21.11.2019[50]
    Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ, ԱԺ:
14. Թողարկում 22.11.2019[51]
    Թեմա՝ Ներկայիս ներպետական զարգացումներ:
15. Թողարկում 25.11.2019[52]
    Թեմա՝ 2020 թվականի Երևան քաղաքի բյուջեն:
16. Թողարկում 26.11.2019[53]
    Թեմա՝ Ներքին քաղաքական զարգացումներ:
17. Թողարկում 27.11.2019[54]
    Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ:
18. Թողարկում 29.11.2019[55]
    Թեմա՝ Ներքաղաքական զարգացումներ:

Բնականաբար, այս ծրագրի որպես առանձնահատկություններից մեկը կարելի է ընդգծել վերջիններիս հյուրերի ցանկը: Ուշագրավ է, որ հյուրերի հիմնական հատվածը նախկին իշխանությունների աջակիցներն ու նախկինում պաշտոնատար անձինք են, ովքեր ներկայումս հանդես են գալիս գործող իշխանությունների կոշտ ընդդիմախոսությամբ: Այսպես դիտարկված հաղորդումների **հյուրերն** էին.

- Շահնազարյան՝ քաղաքական գործիչ, ԱԱԾ նախկին պետ
- Թևանյան՝ «Պոլիտէկոնոմիա» հետազոտական կենտրոնի տնօրեն
- Կոստանյան՝ ՀՀ նախկին գլխավոր դատախազ
- Միհրանյանն՝ քաղաքագետ, պրոֆեսոր
- Խաչատրյան՝ ավագանու նախկին անդամ

48 https://www.youtube.com/watch?v=rdriu6gUxPk
49 https://www.youtube.com/watch?v=da4O78EbbUM
50 https://www.youtube.com/watch?v=oD-lqeZJ9XY
51 https://www.youtube.com/watch?v=_KjicWodzHY
52 https://www.youtube.com/watch?v=VSIT5NecXiU
53 https://www.youtube.com/watch?v=oD-lqeZJ9XY
54 https://www.youtube.com/watch?v=96Gzc1zE8Po
55 https://www.youtube.com/watch?v=LV7nCXb6FXI

- Հարությունյան՝ քաղաքագետ
- Տեր–Նակալյան՝ «Ադեկվադ» միաբանության համահիմնադիր
- Սարգսյան՝ ՀՅԴ երիտասարդական թևի ակտիվիստ
- Վարդանյան՝ ՀՅԴ երիտասարդական թևի ակտիվիստ
- Հակոբյան՝ քաղաքական գործիչ, ՀՀ Ազգային ժողովի 1–ին, 2–րդ և 5–րդ գումարումների պատգամավոր
- Եղիազարյան՝ քաղաքական գործիչ, ԱԱԾ պետի նախկին տեղակալ
- Արշակյան՝ ԱԱԾ պետի նախկին տեղակալ
- Մեյթիխանյան՝ բանասիրաիան գիտությունների դոկտոր–պրոֆեսոր
- Մովսիսյան՝ դոցենտ
- Հակոբկոխյան՝ բռնցքամարտի աշխարհի բազմակի չեմպիոն
- Վարդանյան՝ քաղաքական գործիչ,ՀՅԴնախկին անդամ
- Եսայան՝ նախկին լրագրող, ՀՀ Ազգային ժողովի 5–րդ գումարման պատգամավոր
- Մալյանը՝ «ՎԵՏՕ» շարժման հիմնադիր
- Սահակյանց՝ մուլտիպլիկատոր
- Գալստյան՝ ՀՅԴ գերագույն մարմնի անդամ
- Վարդանյան՝ Երևան քաղաքի ավագանու «Լույս խմբակցության» անդամ, «Հանրապետություն» կուսակցության անդամ
- Գալջյան՝ Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը խմբակցության» անդամ
- Հարությունյան՝ վերլուծաբան
- Մադաթյան՝ հոգեբան
- Բաբայան՝ «Ռեֆորմիստներ» կուսակցության նախագահ
- Հայրիկյան՝ ԱԻՄ առաջնորդ:

Դիտարկելով այն **<u>ուղերձները</u>**, որոնք հիմնականում կարելի է որակել ուղղորդված քարոզչություն կամ ատելության խոսքի տարածում, մասնավորապես *<u>ներպետական և քաղաքական</u>* զարգացումների վերաբեր–յալ լսարանին մատուցվել է, որ.

- բոլոր գործողությունների թիրախը Արցախն է: Դրսի ուժերը, որ նրան բերել են իշխանության, նախ պիտի ամեն ինչ անեն, որ ամեն ոլորտում մենիշխանություն սահմանեն:
- իր լիազոր ներկայացուցչին՝ Արման Բաբաջանյանին (ՀՀ ԱԺ պատգամավոր) ուղարկել է Նաիրի Հունանյանի (Ցմահ ազատազրկման դատապարտված անձ, ով մեղադրվել է 1999

թվականի հոկտեմբերի 27-ին իրականացված ԱԺ գրավման և մի շարք պետական այրերի սպանության մեջ) հետ հանդիպման: Առանց Փաշինյանի հովանավորության նա այնտեղ գնալ չէր կարող:

- կառույցները ջախջախում է Փաշինյանը:
- Արցախի հարցի լուծման գործընթացը տարել է այնպես, ինչպես Ադրբեջանն անգամ չէր կարող երազել:
- հեծուկս Փաշինյանի, Արցախը չի լինելու Ադրբեջանի մաս:
- մի մարդու մոտ է, ով չունի գիտելիքներ, արժեհամակարգ և կառավարման հմտություն, իշխանության այլասերում է տեղի ունենում:
- առաջ նորմալ էր որ փոքր քաղաք-պետություններում կամ քաղաք-ներում հրապարակում՝ քվեարկությամբ լուծվեին հարցերը: Հիմա դա հետամնացություն է, հետն էլ որ Փաշինյանը նշում է, որ դուք հպարտ եք, ու՞ր է այդտեղ հպարտությունը:
- որ Փաշինյանն ասել է, որ ամեն մեկը վարչապետ է, հիմա որևէ մեկից նեղանալու խնդիր չկա: Ոչ ոք իրենից վատը չէ:
- հերոս, գեներալ պատերազմ հաղթած Վալերի Բալասանյանին առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը հոգեկան հիվանդ է համարել, այն մարդուն, ով պաշտպանում է իրեն, որ խաղաղ մանկություն ունենա ու անհոգ սեղանների տակ վազվզի:
- որպես բժիշկ պատրաստ եմ Փաշինյանի ու Թորոսյանի (Խոսքը գնում է ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի մասին) ձեռքը բռնել ու տանել հոգեբուժական կլինիկա, քանի որ ինձ էլ է հետաքրքիր նրանց ախտորոշումը: Հետապնդման զառանցանք ունի այդ Թորոսյանը:
- լինելը այն չէ, որ գնան շորերով սթրիփթիզ ցույց տան մետրոյում:
- Հարությունյանը (Խոսքը գնում է ՀՀ ԿԳՍՄ նախարարի մասին) սպառնում է, որ սատանիստական հիմքով համերգներ այլևս չեն չեղարկվելու:
- Փաշինյանի հորինածները էժանագին պոեզիայի շարքից են: Տեսնում է, որ ժողովուրդը առաջվա պես չի սիրում իրեն, հեքիաթներ է հորինում սեփական անձի փառաբանման մասին:
- Հայաստանը ռասկռուտկա ենք անում, որպես տրանսգենդերների համար հարմար միջավայր:
- մեկի (Խոսքը գնում է 2008 թվականի մարտի 1-ի մասին) զոհերը Նիկոլի (Խոսքը գնում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասին) համար իշխանության հասնելու գործիք են եղել:

- խոսքը ասում են հիմարին (խոսելով նախարարների մասին): Նախարարները հաբռգել են ու նրանց նախկին 100.000 դրամի փոխարեն արդեն 750.000 չի հերիքում, ուզում են կրկնապատկել: Կգա ժամանակ և նրանք կհայտնվեն պետական ու քաղաքական աղբանոցներում:
- հետ համագործակցող ուժը ապագա չունի, մեկ է Նիկոլը քցելու է մինչև այդ:
- համայնքի ղեկավարը Հայաստանում Նիկոլ Փաշինյանն է:
- Դալուզյանի» (Մելինե (Մել) Դալուզյան (Ծանրամարտի Եվրոպայի կրկնակի չեմպիոն) մասին ֆիլմի ֆինանսավորման արդարացումը Փաշինյանի կողմից, թե իբր նա մարզիկ է, նույնն է թե ասեր ես պոռնո ֆիլմում միայն ծիտերն եմ ֆինանսավորել:
- համակարգի կեսը կամ գեյ է, կամ գեյլոյալ:
- Հարությունյանը իրեն Մովսեսի տեղն էր դրել, գավազանով էր ման գալիս, իբր ինքը երկրորդն է այդպիսին ու էլ չկա իրա նմանը:
- Միրզոյանի (Խոսքը գնում է ՀՀ ԱԺ նախագահի մասին) համար Ազգային ժողովը երշիկի արտադրամաս է:
- վերլուծական միտքը թունավոր է: Լավրովը հինգ րոպեում երկու անգամ ցիտեց Փաշինյանին, որ պիտի Արցախի հարցը այնպիսի լուծում ստանա, որ բավարարի երկու կողմերին... Փաշինյանը հարցը դարձրել է պոպուլիզմի առարկա՝ Արցախը Հայաստան է և վերջ: Արցախը հայտնվել է փակուղում և մենք վճարելու ենք դրա համար:
- բան չի արել Նիկոլը, որ աշխատավարձերը բարձրացրել է առանց տեղեկացնելու. պիտի տենց բան չաներ: Մեկ էլ համաձայն չեմ, որ բուհերից հանվի հայոց լեզուն: Ուզում են, որ մեր ազգը խոսի ռուսերեն իսկ այ ռուսները՝ Սորոսի լեզվով: Իբր շատ կարևոր ու առաջնային է մեր համար ռուսերենը, իսկ այ ռուսների համար՝ անգլերենը:
- աթոռը զբաղեցրած անձնավորությունը... նա իմ վարչապետը չէ: Ես ասել եմ, որ վարչապետի աթոռը զբաղեցրած անձնավորությունը ծոծրակը կտեսնի, Ստամբուլյան կոնվենցիան չի լինի, նաև Ամուլ սարը (հանք, որի վերաբացման հետ կապված հանրային դժգոհություն կա) բացելը չի լինի:
- հարց են տվել ու խայտառակ պատասխան է տվել Փաշինյանը: Նա հատուկ ստախոս է: Մի շատ հարգարժան բժիշկ տասական դրամ է հավաքում, որ ուղարկի բուժման Փաշինյանին: Նա հոգեկան խանգարում ունի:

- գոմիկների փաստաբանն է:
- քցեց ժողովրդին: Ազգային ժողովում իրանցից գոհ երեխեք են, ամեն ինչ ունի իր վերջը: Կինդ բազմազավակ մայր (Խոսքը գնում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի մասին) է, թող երեխաների ձեռքը բռնի ոչ թե քո ձեռքը բռնած աշխարհը ման գա: Այսօրվա իշխանությունները սողալով եկան ու ելան մեր շալակը:
- ասեք, որ բանաստեղծություններ չգրի, շատ անտաղանդ է: Ես մի վատ լուր էլ ունեմ, ձեր վարչապետը ձեզ չի սիրում: Հայոց լեզուն պիտի պաշտպանել այսօրվա վարչապետից և իր վերնախավից:
- Բաբաջանյանը իր դերակատարությամբ ինձ համար ոչնչություն է ու չեմ կարող համեմատել Մարուքյանի (Խոսքը գնում է «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ ԱԺ համանուն խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի մասին) հետ: Գալուստ Սահակյանը համով մարդ է, Արարատ Միրզոյանը՝ ընդհակառակը:
- գրականության հետ բացարձակ կապ չունի: Հասարակությունը թմբիրի մեջ կմնա այնքան, երբ Փաշինյանը կստորագրի Ղարաբաղի վերաբերյալ մի թուղթ ու դրանով մեզ փաստի առաջ կկանգնեցնի: Փաշինյանը մեզ տանում է վտանգավոր տեղ, ես նրա հետ ունեմ նաև անձնական պայքար, ոչ միայն քաղաքական: Եթե մենք պիտի էշի ականջում քնած սպասենք թե ինչ է անելու Նիկոլը, ապա փաստի առաջ կկանգնենք, ապա ամոթ է մեզ:
- ավելի շատ խավար է քան լուսավոր:
- ոչ հարիր արտահայտվեց միջազգային մակարդակում. Վատիկանի պադվալներ, պատերին ցբխել, ցխել... չի կարելի այսպես: Նիկոլի պահվածքը իռացիոնալ պոպուլիզմ է, որը տանում է իշխանության այլասերումի:
- Փաշինյանի ցույցերը վերածել է շարժման Սերժ Սարգսյանը: Մենք ապրում ենք տափակ անեկդոտի մեջ: Այնպիսի ընդդիմություն ինչպիսին այսօր գոյությունն ունի Հայաստանում, երբևէ գոյություն չի ունեցել: Սոդոր-Գոմորը Փաշինյանին բերեց իշխանության (ի նկատի ունի օտարերկրյա հովանավորությունը):
- իշխանությունը չքնաղ արվեստի նուրբ կերպով հիմարի տեղ է դնում մարդկանց:
- շուստռի տղա ա, ու Նիկոլը ասեց, որ կապ չունի Տեր-Պետրոսյանի հետ, գլխի ընկնելով որ նրան չեն սիրում: Եթե Հռոմի պապը լուրջ վերաբերվեր Նիկոլին, մեր երկրի հետ հարաբերությունները կխզեր, քանի որ նա ուղիղ մեղադրեց Հռոմին, Վատիկանի պադվալներում

կոռումպացված անձիք պահելու համար:

- հրաժարվեց այն ամենից ինչը իրեն կերտել է, դա մարտի մեկի իրադարձություններն են: Եթե նա ուրանում է անցյալը, հետո էլ կուրանա նաև ներկայիս թիմակիցներին: Նիկոլը ատելության կնքահայրն է մեր երկրում:
- մոտ երկու տարի է անցել, բայց ոչ մի փոփոխություն չկա: Փաշինյանը պատասխանատու է մարտի մեկի համար, նա պիտի պատասխան տա տաս զոհերի համար:
- Նիկոլն ասի, այն ժամանակ ապուշ էի հիմա խելացի եմ, կամ հակառակը... քանի որ ԵԱՏՄ տանող ճանապարհը կործանման ճանապարհ է: Դա բռնապետների դաշինք տանող ճանապարհն է: Ես Փաշինյանին չեմ ասել դեբիլ ես, ասել եմ, դու այն ժամանակ չէիր հասկանում թե հիմա՝ ի նկատի ունենալով ընտրական օրենսգիրքը:
- լուրջ հարցերում է ստել: Արմեն Սարգսյանը (Խոսքը գնում է ՀՀ ներկայիս նախագահի մասին) երբևէ սկզբունքայնություն չի դրսևորել: Քաղաքական ղեկավարը չպիտի հանդիպումներ ունենա միջանցքներում...

Այսպիսով ամփոփելով մեկամսյա մշտադիտարկման արդյունքները, կարելի է հանգել այն եզրակացության, որ սույն ծրագրի հիմնական նպատակը գործող իշխանություններին հիմնականում ծայրահեղ քննադատողներին լսարան տրամադրելու միջոցով հանրայնացնեն և տարբեր անձանց կողմից հիմնավորվեն այն նույն թեզերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջ են քաշվում հաղորդավարի կողմից:

Նպատակ ունենալով վարկաբեկել գործող իշխանությանը, նշված ծրագրի շրջանակներում հիմնականում հանրային կարծիք է ձևավորվում նախկին իշխանությունների ներկայացուցիչների կամ աջակիցների միջոցով, ովքեր հիմնականում տարածում են չստուգված տվյալներ, ապատեղեկատվություն և ատելության խոսք են տարածում:

4.4. «ՕրաԽնդիր»

Սույն հաղորդման ֆորմատը կայանում է նրանում, որ հաղորդավարը յուրաքանչյուր հաղորդման համար հրավիրում է մեկական հյուր և վերջինիս հետ քննարկում է անցնող օրերի ընթացքում արդի թեմաները, հարցի ձևակերպման մեջ հիմնականում արտահայտելով հստակ ձևավորված վերաբերմունքը: Ի տարբերություն նախորդիվ ներկայացված ծրագրերի,

այս հաղորդման հյուրեր հրավիրվում են նաև իշխող կուսակցության և պառլամենտական մեծամասնության ներկայացուցիչները, այսինքն ընդհանուր առմամբ հնչում է նաև տարբեր տեսակետներ ներկայացնող կարծիքներ:

Թիրախավորված ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 16 հաղորդում, որոնց հիմնական **թեմաներն են** եղել.

1. Թողարկում 04.11.2019[56]
   Թեմա՝ Ներքաղաքական օրակարգ: Նիկոլ Փաշինյանը համար մեկ հակահեղափոխականն է:
2. Թողարկում 05.11.2019[57]
   Թեմա՝ Ներքաղաքական հարցեր, Արցախի հիմնահարց
3. Թողարկում 06.11.2019[58]
   Թեմա՝ Հայագիտական առարկաները դպրոցից և բուհից հանելը
4. Թողարկում 07.11.2019[59]
   Թեմա՝ Տնտեսության և կառավարման հիմնահարցեր
5. Թողարկում 8.11.2019[60]
   Թեմա՝ Տնտեսության և կառավարման հիմնահարցեր
6. Թողարկում 11.11.2019[61]
   Թեմա՝ Ներքաղաքական օրակարգ
7. Թողարկում 12.11.2019[62]
   Թեմա՝ Դատաիրավական հիմնահարցեր
8. Թողարկում 13.11.2019[63]
   Թեմա՝ Սոցիալ-Տնտեսական հիմնահարցեր
9. Թողարկում 14.11.2019[64]
   Թեմա՝ Ներպետական հարցեր, Արցախ
10. Թողարկում 18.11.2019[65]
    Թեմա՝ Գիտակրթական հիմնահարցեր
11. Թողարկում 19.11.2019[66]
    Թեմա՝ Ներքաղաքական օրակարգ

56 https://www.youtube.com/watch?v=UzbhC_Et1xI
57 https://www.youtube.com/watch?v=QltQXBOQ16U
58 https://www.youtube.com/watch?v=YQxl4j1iG-E
59 https://www.youtube.com/watch?v=yAz3q7-gLSk
60 https://www.youtube.com/watch?v=E8Ul65Rc6do
61 https://www.youtube.com/watch?v=cQcC0cO0f_U
62 https://www.youtube.com/watch?v=RmTpQ5nVB-E
63 https://www.youtube.com/watch?v=yt56ZWVTmCE
64 https://www.youtube.com/watch?v=yt56ZWVTmCE&t=141s
65 https://www.youtube.com/watch?v=kV_Cfdr3m_Q
66 https://www.youtube.com/watch?v=r44EfzfIDyY

12. Թողարկում 20.11.2019[67]
    Թեմա՝ Գիտատեխնոլոգիական հարցեր
13. Թողարկում 21.11.2019[68]
    Թեմա՝ Գիտական հիմնահարցեր: Դասավանդել թե ոչ հայոց լեզու և հայոց պատմություն առարկաները բուհերում
14. Թողարկում 25.11.2019[69]
    Թեմա՝ Հայ լրագրողների այցը Ադրբեջան
15. Թողարկում 26.11.2019[70]
    Թեմա՝ Իրավական և անվտանգային հիմնահարցեր
16. Թողարկում 27.11.2019[71]
    Թեմա՝ Իրավական հիմնահարցեր
17. Թողարկում 28.11.2019[72]
    Թեմա՝ Ներքաղաքական հիմնահարցեր:

- Այսպես դիտարկված հաղորդումների **հյուրերն** էին.
- Բաղդասարյան՝ Գերագույն խորհրդի պատգամավոր
- Սարգսյան՝ ՌԱՀՀԿ նախագահ
- Ֆարմանյան՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր
- Մանուկյան՝ ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության անդամ
- Սահակյան՝ «Քաղաքացու Որոշում» ՍԴԿ գործադիր մարմնի քարտուղար
- Ենոքյան՝ «Մեդիա պաշտպան» նախաձեռնության ղեկավար
- Բաբայան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ
- Ասատրյան՝ ՀՀ ԿԲ նախկին նախագահ
- Հակոբյան՝ «Ազգային օրակարգ» կուսակցության խորհրդի նախագահ
- Մելքոնյան՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն
- Հովսեփյան՝ ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր
- Վարդանյան՝ ԱՏԶՄ գործադիր տնօրեն
- Բլեյան՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն
- Էլբակյան՝ Արցախի հանրային հեռուստաընկերության մեկնաբան
- Խաչատրյան՝ ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության անդամ
- Օհանյան՝ նախկին դատավոր

67 https://www.youtube.com/watch?v=6lGIFD2v8zQ
68 https://www.youtube.com/watch?v=hK0WKwRzpKw
69 https://www.youtube.com/watch?v=mbxj4ninlsw
70 https://www.youtube.com/watch?v=mbxj4ni
71 https://www.youtube.com/watch?v=O1oFj6D_wH4
72 https://www.youtube.com/watch?v=O1oFj6D_wH4

Դիտարկելով այն **ուղերձները**, որոնք հիմնականում կարելի է որակել ուղղորդված քարոզչություն կամ ատելության խոսքի տարածում, մասնավորապես *ներպետական և քաղաքական* զարգացումների վերաբերյալ լսարանին մատուցվել է, որ.

- Սարգսյանը (Խոսքը գնում է ՀՀ երրորդ նախագահի մասին) ի տարբերություն Ռոբերտ Քոչարյանի (Խոսքը գնում է ՀՀ երկրորդ նախագահի մասին), ներքին օղակի հրահանգիչ է եղել մինչև իշխանության գալը, ներքևիններին հրահանգել է, վերևիններին քծնել: Քոչարյանը միայն հրահանգել է: Լևոն Տեր-Պետրոսյանը ավելի բարձր մակարդակ ուներ այդ տեսանկյունից:
- հայտարարեց, որ սահմանադրություն չի փոխում: Սահմանադրությունն է ցանկացած գործընթացի հիմքը: Սրանից ելնելով Փաշինյանը իմ համար առաջին հակահեղափոխականն է: Նրա ասածը հիմք չէ: Այսօր մի բան կարող է ասել, վաղը ուրիշ բան անել: Մոնիպուլացիա է անում ժողովրդի վստահության համար:
- հանրապետության ղեկավարին պատիվ չի բերում խոսելու լեզվի մասին, մեր ինքնության ու կրոնի մասին՝ կատարելապես բոբիկ լինելով այդ թեմայից:
- հանրային համաձայնություն կա, որ ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարար Արայիկ Հարությունյանը իր տեղում չի ու չգիտի ինչի մասին է խոսում: Այն կառավարությունը, որը չի գիտակցում, որ հայոց լեզուն, կրոնը մեր ինքնության հենասյուներից է՝ ձեռնոց է նետում, նա դա չի մարսելու: Այն ինչ այս թեմայով Փաշինյանն արեց իր ֆեյսբուքյան զրույցում, դա դարանակալ մեջքից հարված էր հայ ժողովրդին:
- հետո օլիգարխների կարգավիճակը փոխվեց: Վարչապետը նրանց անվանեց խոշոր ձեռնարկատերեր: Առաջ նրանց Փաշինյանն անվանում էր մարտի մեկի պատասխանատուներ: Արդյո՞ք քաղաքական հովանավորչություն չէ Սամվել Ալեքսանյանի ու Փաշինյանի կողք-կողքի նկարը:
- մենաշնորհիներով, արտոնություններով հարստացածները հիմա ավելի մեծ շանս ունեն հաջողելու, քան մյուսները: Հետագայում ավելի լսելի են դառնալու այն մարդկանց ձայները, ովքեր ասելու են բերեք սրանց գնդակահարենք ու ունեցվածքը ձեռքից խլենք: Եթե մարդը չի մասնակցել արյան հետ կապված գործերին (ձեռքերն արյունոտ չեն), ապա օգտվել է դրանից ու հարստացել: Ես գիտեմ պաշտոնյա, ով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկության բաժնետոմսերի փաթեթի մի մասը գնել է սիմվոլիկ

գնով, որ ուրիշի աշխատանքի վրա շահույթ ստանա: Պաշտոնական դիրքի չարաշահում է սա:

- ընդդիմություն չկա: «Լուսավոր Հայաստանը» ծառայում է Փաշինյանի շահերին: Փաշինյանը ակտիվ փնտրտուքների մեջ ընդիմություն է փնտրում, որ վատաբանի ու ասֆալտին ծեփի: Իր խնդիրը հիմա հասարակությունը կոտորակելն է, սև ու սպիտակի բաժանելը, որ հեշտ տիրի:
- են վերացնել Գիտությունների ակադեմիան, հանելով 11 էջանոց օրենքը:
- է դուրս գալ ԱԺ-ից և շփվել քաղաքացու հետ: Գործադիրում աշխատելը դա մի բաժակ ջուր խմել չի:
- բաներ են կատարվում մեր հարևան երկրներում, մեր խորհրդարանում վատնում են ռեսուսներ՝ տրանսգենդրներ, Ստամբուլյան կոնվենցիա: Հիմա էլ խորհրդարանում ձեր խմբակցության ներկայությունը չեք կարողանում ապահովել: Կան պատգամավորներ ձեր խմբակցությունում, որոնք որևէ օրենք չեն հեղինակել, քաղաքական պատասխանատվություն չեն կրում: Գործուղումների ծավալը մեծացել է, բայց արդյունավետությունը զրո է: Միայն սելֆիների թիվն է ավելացել: Մեր խորհրդարանականները անգամ դեմ ու կողմ կոճակները չեն տարբերում:
- հանրային գործիչ է, եթե անմեղսունակ է, պիտի թողնի դպրոցը:
- դատավորներ կան և կլինեն, բացարձակ անկախ դատավորներ չկան: Դատավորի անհատական ոգուց էլ է կախված այս ամենը, կան թռիչքի ոչ ընդունակ դատավորներ՝ շառից հեռու: Եվ կան հանդուգն դատավորներ, որ ծառայություններ են մատուցել իշխանություններին:
- քաղաքական համակարգը, որ ստեղծվեց վերջին սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սերժ Սարգսյանի համար էր և այդ քաղաքական կոստյումը Փաշինյանը մեծ սիրով հագավ:
- քայլերը, որոնք արվում են, ոչ միայն բավարար չեն, այլև կոռուպցիայի դեմ պայքարում խիստ ցաքուցրիվ են, հակահամակարգային բնույթ են կրում:
- հետո անցած մեկուկես տարին մսխվել է բառացիորեն, երբ պիտի լինեին կարևոր քաղաքական փոփոխությունների սկիզբ: Կոռուպցիայի դեմ պայքարը քաղաքական շոու է:

Այսպիսով, ամփոփելով սույն ծրագրի մեկամսյա դիտարկումը, կարելի է փաստել, որ այն բավականին հստակ ձևավորված վերա-

բերմունք ունենալով օրվա իշխանությունների և նրանց գործունեության վերաբերյալ, այնուամենայնիվ, հարթակ տրամադրում է հենց իշխանության ներկայացուցիչներին՝ հակադարձելու համար իրենց վերաբերյալ հնչեցվող դիտարկումներին:

4.5. «Տողերի արանքում»

Սույն ծրագիրը հանդիսանում է Կարեն Բեքարյանի հեղինակային հաղորդումը, որի ժամանակ վերջինս քննարկում է ընթացիկ օրերին (վերջին մեկ շաբաթվա ընթացքում) տեղ գտած և հանրությանը հուզող թեմաներ, մեկնաբանում է իրադարձություններ: Երբեմն ցուցադրում է կարճ ռեպորտաժներ, որտեղ արտացոլվում է քննարկվող թեման:

Թիրախավորված ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 5 հաղորդում, որոնց հիմնական **թեմաներն են** եղել.

1. Թողարկում 01.11.2019[73]
   Թեմա՝ Արտգործնախարարի հարցազրույցը BBC-ին
2. Թողարկում 8.11.2019[74]
   Թեմա՝ Արցախի հիմնախնդիր
3. Թողարկում 15.11.2019[75]
   Թեմա՝ Լավրովի Հայաստան կատարած պաշտոնական այցի մասին
4. Թողարկում 22.11.2019[76]
   Թեմա՝ Երկրում ընթացող իրադարձություններ:
5. Թողարկում 29.11.2019[77]
   Թեմա՝ Լրագրողների փոխադարձ այցը Ադրբեջան և Հայաստան

Դիտարկելով այն **ուղերձները**, որոնք հիմնականում կարելի է որակել ուղղորդված քարոզչություն կամ ատելության խոսքի տարածում, մասնավորապես *ներպետական և քաղաքական* զարգացումների վերաբերյալ լսարանին մատուցվել է, որ.

- Մնացականյան՝ Լեռնային Ղարաբաղն (Արցախ) անվտանգության մեծ մարտահրավեր է մեր ժողովրդի համար: Սա լեզվամտածողության արդյունք է... սա իրավիճակի վատթարացում է: Այս

73 https://www.youtube.com/watch?v=gzdDJN316MU
74 https://www.youtube.com/watch?v=j1wyqizWLMQ
75 https://www.youtube.com/watch?v=SKyEt-0MN_k
76 https://www.youtube.com/watch?v=ndvbeLjrltI&list=PLq1nxWzeILqFZY78VGoZlBZG5N-BhdaR-J&index=18
77 https://www.youtube.com/watch?v=4RFJN4oGcjI

տեքստը սրբագրված է ներկայացվել պաշտոնական էջում, որով փորձ է արվել մոլորության մեջ գցել մեր ժողովրդին: Ինքնորոշման իրավունքից արտգործնախարարը ընդհանրապես գլուխ չի հանում: Մեծագույն մարտահրավեր է նետվում Արցախի ինքնորոշմանը:

- Ղարաբաղի հարցում չկողմնորաշված բաներ է ասում ու խնդիր առաջացնում ինքնորոշման հետ կապված: Նրա ասածները իրար հետ չեն համընկնում, իրարամերժ կարծիքներ են: Փաինյանը խեղաթյուրում է բանակցային գործընթացի էությունը: Փաշինյանը չունի «ա» կետից «բ» կետ գնալու ունակություն ու տեսլական: Ռազմավարության մասին Փաշինյանը գաղափար անգամ չունի:
- խոսքի մեջ կարևոր էր այս էլեմենտը՝ Հայ-Թուրքական կապերի կարգավորումը երկկողմ օրակարգի հարց է: Ռուսաստանը ելնում է իր շահերից, որ լուծի տարածաշրջանային հիմնախնդիրները ի շահ իրեն: Լավրովը լեգիտիմացնում է թուրքական մոտեցումը Արցախի հարցում: Արտգործնախարարությունում սա չեն ուզում նկատել:
- փարիզյան ելույթի տեքստը նորից սրբագրված է ներկայացվել մեր հանրությանը, ինչը չի կարելի: Վարչապետը արդեն ասել է ինչ ասել է... Վարչապետը սխալ է արել ու դա ողջ աշխարհն է լսել, չի կարելի սրբագրված ներկայացնել սեփական ժողովրդին: Փաշինյանն ասել է, որ ինքը հիմա խոսում ա Ադրբեջանի նախագահի անունից: Միջանկյալ կարգավիճակ եզրույթը վարչապետի անտեղյակությունն է կամ դավադրություն...
- նախընտրում եմ խոսել Ղարաբաղի մասին իմ նախագծերով: Փաշինյանը մեղադրում է նախորդներին, որոնք չեն տեղավորվում որևէ էթիկայի տրամաբանության մեջ: Միլանում նա խմբագրեց նաև Ավետարանի Ղուկասի խոսքերը:
- մեջ որևէ դրական տեղաշարժ, տրամադրությունների առումով, չի արձանագրվել: Այցից մեկ օր անց, Ադրբեջանի նախագահը ցեխ շպրտեց մեր կողմը և սա որևէ կապ չուներ խաղաղության հետ: Մեր արտաքին գործերի նախարարությունը հավուր պատշաճի չպատասխանեց:

Ամփոփելով մշտադիտարկման մեկ ամսյակը, կարելի է եզրահանգել, որ սույն նախագծի շրջանակներում վերլուծաբանը օգտագործելով հիմնականում ընտրված բառամթերք՝ հանրությանն է հրամցնում այն թեզը, որ գործող իշխանությունը, բավարար արհեստավարժ ու կոմպետենտ չի և իրենց այդ գործողություններով վնաս են հասցնում հասարակությանն ու պետականությանը:

4.6. «Խոսքի ազատություն»

Մշտադիտարկման այս շրջանում կարելի է արձանագրել, որ հաղորդումը ունի ընդգծված ընդդիմադիր վերաբերմունք և հյուրերը ընտրվում են իշխանությանը հակադրվող կամ ընդդիմադիր ուժերից: Հաղորդման ընթացքում հնչում են հարցեր, որոնք ակտիվ շրջանառվում են համացանցում: Հաղորդավարը ակնհայտորեն անաչառ չէ և հաճախ հարցերում հնչում էին նաև մեղադրանք պարունակող արտահայտություններ:

Թիրախավորված ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 5 հաղորդում, որոնց հիմնական թեմաներն են եղել.

1. Թողարկում 08.11.2019[78]
   Թեմա՝ Ռոբերտ Քոչարյան
2. Թողարկում 18.11.2019[79]
   Թեմա՝ ներքաղաքական զարգացումներ
3. Թողարկում 19.11.2019[80]
   Թեմա՝ 2020 թվականի բյուջեի նախագիծ
4. Թողարկում 21.11.2019[81]
   Թեմա՝ Ղարաբաղյան կոնֆլիկտ
5. Թողարկում 25.11.2019[82]
   Թեմա՝ տնտեսություն

Դիտարկված հաղորդումների թեմաները վերաբերում էին տվյալ պահին երկրում կատարվող իրադարձություններին և Ղարաբաղյան կոնֆլիկտին: ԱՄՆ-ի, Ռուսաստանի և ընդհանրապես միջազգային հարաբերությունների վերաբերյալ թողարկումներ չկային: Միջազգային հանրության վերաբերյալ կարծիքներ հնչել են Ղարաբաղյան կոնֆլիկտի մասին քննարկումների ընթացքում:

Հաղորդման հյուրերը ընդդիմադիր կամ իշխանությանը հակադրվող գործիչներ էին և փորձագետներ: Այսպես, դիտարկված հաղորդումների հյուրերն էին.

- Սողոմոնյան՝ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի ղեկավար
- Կիվիրյան՝ վերլուծաբան, փորձագետ

78 https://www.youtube.com/watch?v=jXBkR-Jv0ek&feature=emb_title
79 https://www.youtube.com/watch?v=W_qR7Xmsyiw&feature=emb_title
80 https://www.youtube.com/watch?v=cSBR77-LbVY&feature=emb_title
81 https://www.youtube.com/watch?v=wXctRm-bsi0&feature=emb_title
82 https://www.youtube.com/watch?v=Jwq0lhMSy_4&feature=emb_title

- Բոստանջյան՝ ԲՀԿ նախկին պատգամավոր
- Տեր-Նակալյան՝ «Ադեկվադ» միաբանության համահիմնադիր
- Խաչատրյան՝ ՀՅԴ անդամ

Դիտարկելով այն ուղերձները, որոնք հիմնականում կարելի է որակել ուղղորդված քարոզչություն կամ ատելության խոսքի տարածում, մասնավորապես **ներպետական** զարգացումների վերաբերյալ լսարանին մատուցվել է, որ.

- Քոչարյանը ենթարկվում է քաղաքական հետապնդման
- չգիտեն՝ ինչպես լուծել Ղարաբաղյան կոնֆլիկտը
- վարում են սխալ կադրային քաղաքականություն
- կառույցներում պաշտոնանկությունները կապված են նրանով, որ Նիկոլ Փաշինյանը վախենում է կայացած պաշտոնյաներից
- Փաշինյանը շատակեր է
- Փաշինյանը չի կարողանում դառնալ վարչապետ և մնացել է լրագրող
- վարում են սոցիալ-պոպուլիստական քաղաքականություն
- Հարությունյանը մեղավոր չէ և պետք է պահանջել Նիկոլ Փաշինյանի հրաժարականը
- ժողովում չկա ընդդիմադիր քաղաքական ուժ:

Այսպիսով ամփոփելով սույն հաղորդման մեկամսյա եթերաշրջանի դիտարկման արդյունքները կարելի է փաստել, որ այն ընդգծված ուղղորդված կարծիքների հանրայնացում է իրականացնում՝ հիմնականում շեշտադրելով իշխանությունների ոչ կոմպետենտ լինելը:

4.7. «Հարցազրույց»

Մշտադիտարկման այս շրջանում կարելի է արձանագրել, որ հաղորդումը ունի ընդգծված ընդդիմադիր վերաբերմունք և հյուրերը ընտրվում են իշխանությանը հակադրվող կամ ընդդիմադիր ուժերից: Հաղորդման ընթացքում հնչում են հարցեր, որոնք ակտիվ շրջանառվում են համացանցում: Հաղորդավարները ամեն հաջորդ եթերի ընթացքում փոխվում են:

Թիրախավորված ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել ընդհանուր թվով 12 հաղորդում, որոնց հիմնական թեմաներն են եղել.

1. Թողարկում 4.11.2019[83]
   Թեմա՝ Ղարաբաղյան կոնֆլիկտ
2. Թողարկում 13.11.2019[84]
   Թեմա՝ Կրթության ոլորտի բարեփոխումներ
3. Թողարկում 18.11.2019[85]
   Թեմա՝ Կադրային քաղաքականություն
4. Թողարկում՝ 19.11.2019[86]
   Թեմա՝ ՀՀ տնտեսություն
5. Թողարկում 20.11.2019[87]
   Թեմա՝ Ինստիտուտներ
6. Թողարկում 21.11.2019[88]
   Թեմա՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի պատմություն
7. Թողարկու 22.11.2019[89]
   Թեմա՝ Նախկինների օրոք կարատրված աշխատանքներ
8. Թողարկում 25.11.2019[90]
   Թեմա՝ Տնտեսություն
9. Թողարկում 26.11.2019[91]
   Թեմա՝ Պետության կառավարում
10. Թողարկում 27.11.2019[92]
    Թեմա՝ Շինարարական աշխատանքների անվտանգություն
11. Թողարկում 28.11.2019[93]
    Թեմա՝ ԱԺ գործունեության մեկ տարվա ամփոփում
12. Թողարկում 28.11.2019[94]
    Թեմա՝ Առողջապահության ապահովագրություն

Մշտադիտարկման շրջանը համընկել է 2020 թվականի բյուջեի քննարկումների հետ, և մի քանի հաղորդումների ընթացքում քննարկվել է տնտեսությանը և բյուջեին վերաբերվող հարցեր: Դիտարկված հաղորդումների մեծ մասի թեմաները վերաբերել են Ղարաբաղյան կոնֆլիկ-

83 https://www.youtube.com/watch?v=wzKFedI2OCU&feature=emb_title
84 https://www.youtube.com/watch?v=kZxE8akejdQ&feature=emb_title
85 https://www.youtube.com/watch?v=1WD6ODg5_U4&feature=emb_title
86 https://www.youtube.com/watch?v=MUcdaCn3a-8&feature=emb_title
87 https://www.youtube.com/watch?v=DTe7o4GYvEg&feature=emb_title
88 https://www.youtube.com/watch?v=egRgbVGfg60&feature=emb_title
89 https://www.youtube.com/watch?v=JS6y3WLHjuA&feature=emb_title
90 https://www.youtube.com/watch?v=jxcfZzPWzBI&feature=emb_title
91 https://www.youtube.com/watch?v=PqDL5HMLfQI&feature=emb_title
92 https://www.youtube.com/watch?v=pEnFGe8XHxk&feature=emb_title
93 https://www.youtube.com/watch?v=szpq3lK0gqo&feature=emb_title
94 https://www.youtube.com/watch?v=Al7JCyqb9gg&feature=emb_title

տին և ՀՀ տնտեսությանը: ԱՄՆ–ի, Ռուսաստանի և միջազգային հա–րաբերությունների վերաբերյալ քննարկումներ չկան: Հաղորդման հյուրերը ընդդիմադիր հայացքներ ունեցող հանրային գործիչներ են և փորձագետներ:

Այսպես, դիտարկված հաղորդումների **հյուրերն** էին.

- Հարությունյան՝ «Ազգային միասնություն» կուսակցության անդամ
- Խաչատրյան՝ կրթության փորձագետ
- Ավետիսյան՝ տնտեսագետ
- Աճեմյան՝ ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ
- Բոզոյան՝ քաղաքագետ
- Նազարյան՝ «Այլընտրանք նախագծեր» խմբի անդամ
- Կարապետյան՝ «Տնտեսական զարգացման նախաձեռնությունների» կենտրոնի նախագահ
- Մեսրոպյան՝ Հանրային խորհրդի անդամ
- Հովսեփյան՝ տեխնիկական անվտանգության փորձագետ
- Սամսոնյան՝ ՀՀ ԱԺ պատգամավոր
- Գրիգորյան՝ բժիշկ, առողջապահության կազմակերպիչ

Դիտարկելով այն ուղերձները, որոնք հիմնականում կարելի է որակել ուղղորդված քարոզչություն կամ ատելության խոսքի տարածում, մասնավորապես *ներպետական* զարգացումների վերաբերյալ լսարանին մատուցվել է, որ.

- քաղբանտարկյալ է:
- ատելության մթնոլորտ են ստեղծում:
- հավաքված են այս իշխանության այլընտրանքը:
- Փաշինյանը ունի հոգեկան խնդիր:
- Փաշինյանը տեռորիստ է:
- վատ աշխատանքի համար մեղավոր է Նիկոլ Փաշինյանը, պետք է պահանջել Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:
- ում կա գործազրկություն և իշխանությունները չեն կարող լուծել այդ խնդիրը:
- պատասխանատուները սխալ են կառավարում:
- ինստիտուտները չեն գործում:
- անպատասխանատու են:
- Սարգսյանը (Խոսքը գնում է ՀՀ երրորդ նախագահի մասին)

Զագրեբում ունեցավ շատ լավ ելույթ, իսկ Նիկոլ Փաշինյանի ելույթը Միլանում խայտառակություն էր:

- իշխանությունները պոպուլիստ են:
- օրոք են կառուցվել ստրատեգիական բազմաթիվ ճանապարհներ և կառույցներ, իսկ այս իշխանությունները դժվարությամբ են դրանք վերանորոգում:
- կյանքի որակը հեղափոխությունից հետո չի փոխվել, անգամ վատացել է:
- չեն կարողանում ոչ մի ծրագիր կատարել, դրա համար էլ ունենք այսքան բյուջեի թերակատարում:
- ունենք մահեր, քանի որ համապատասխան մարմինները չեն աշխատում:
- աչքի են ընկել մի քանի կոռուպցիոն դրսևորումներով և կամք չունեն կոռուպցիայի դեմ պայքարելու:

Այսպիսով, ամփոփելով նշված հաղորդման մշտադիտարկման արդյունքները, կարելի է փաստել, որ այս հաղորդումների ժամանակ հնչեցված կարծիքները նույնական են, ինչ և այս նույն ալիքի մյուս հաղորդման ժամանակ հնչեցվածներն են: Հիմնական հակաքարոզչության թիրախն է գործող իշխանությունը, որը ներկայացվում է միակողմանի:

V. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԸ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՈՂ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ

5.1. Հայ-ռուսական եվ հայ-ամերիկյան հարաբերությունները

Մշտադիտարկման ժամանակահատվածում հայ-ռուսական և հայ-ամերիկյան հարաբերությունների վերաբերյալ ուշագրավ հրապարակումները, որոնք ամփոփվել և ներկայացվում են ստորև:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2019 թվականի հոկտեմբերի 31-ին Երևանում ներկայացրել էր «Ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում և դրա ազդեցությունը մարդու իրավունքների վրա» խորագրով զեկույցը, որը ֆինանսավորվել էր Եվրամիության Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովը (CSF EP) և Ժողովրդավարության ազգային հիմնադրամը (NED): Ուշագրավ է, որ Հայաստանում Ռուսաստանի դեսպանատունն իր զարմանքն է հայտնել կապված Հայաստանում ՌԴ ԶՈՒ կայանի ներկայության մասին զեկույցի հետ, մասնավորապես նշելով, որ. «Հաշվի առնելով ֆինանսավորման աղբյուրները՝ անհասկանալի է, ինչպես կարող են նման հետազոտություններն օբյեկտիվ լինել[95]: ... Մի շարք ոչ կառավարական կազմակերպություններ, օգտագործելով «կերակրվող» ԶԼՄ-ներին, փորձում են սեպ խրել ռուս-հայկական հարաբերությունների մեջ[96]:»,- նշված է դեսպանատան հայտարարության մեջ: Միևնույն ժամանակ սոցիալական ցանցերի բազմաթիվ օգտատերեր և որոշ հանրային գործիչներ ևս մեկնաբանություններում և հարցազրույցներում դատապարտում էին այն հանգամանքը, որ ամերիկյան և եվրոպական գումարներով ուսումնասիրություններ են իրականացվում ռուսական ռազմաբազայի վերաբերյալ, որի արդյունքներն էլ կարող են բացասաբար անդրադառնալ հայ-ռուսական հարաբերությունների վրա:

Դիտարկված ժամանակահատվածում ևս մեկ հանրային գործչի ասուլիսից հատված ներկայացվում է ստորև, որում առկա են որպես

95 https://armeniasputnik.am/armenia/20191101/20960763/razmakayani-harcery-arevmtyan-gumarnerov-petq-che-qnnel-despanatun.html

96 https://armeniasputnik.am/politics/20191031/20943887/arevtamet-kazmakerputyunnern-uzum-en-sep-xrel-yerevani-u-moskvayi-mijev-haytararutyun.html

հաստատված փաստեր այնպիսի տեղեկություններ, որոնք միտված են քարոզչություն իրականացնելուն՝ հստակ ուղղվածությամբ: Մասնավորապես. «Հայաստանի և Ռուսաստանի միջև դեռևս ստորագրված չէ օտարերկրյա զինվորականների բացակայությունը մեր երկրում երաշխավորող փաստաթուղթը, քանի որ Հայաստանն այն դեռ չի համաձայնեցրել ԱՄՆ-ի հետ»,- մամուլի ասուլիսի ժամանակ նման կարծիք հայտնեց ՍԱՊԾ նախկին պետ Գրիգոր Գրիգորյանը՝ անդրադառնալով դեռևս անցած տարի ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հայտարարությանը, թե Հայաստանի հետ ավարտական փուլում է գտնվում փաստաթղթի նախապատրաստման նախագիծը, որը կերաշխավորի, որ այնտեղ չլինեն օտարերկրյա զինվորականներ, որ ամեն ինչ թափանցիկ լինի: ՌԴ արտաքին գործերի նախարարը նման հայտարարություն էր արել՝ ի պատասխան լրագրողի այն հարցին, թե ինչո՞ւ իրենք թույլ տվեցին, որ 2016թ. իրենց ռազմավարական գործընկեր Հայաստանում ամերիկացիները կառուցեն 3 կենսաբանական լաբորատորիա: «Ռուսաստանն անհանգստացած է, որ իր սահմանների երկայնքով ԱՄՆ-ը լաբորատորիաներ է կառուցում, և այդ մտահոգությունը տեղին է: ԱՄՆ-ը թույլ չի տալիս, որ Ռուսաստանը ստուգի իր կենսաբանական լաբորատորիաները, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանը շրջապատում է այդ լաբորատորիաներով: Երբ Լավրովը հայտարարություն արեց, ես ասացի, որ ԱՄՆ-ը դեմ չի լինելու, քանի որ չի եղել նման դեպք, որ որևիցե մեկը մտնի Պենտագոնի կողմից ֆինանսավորված որևէ լաբորատորիա ու հայտնաբերի, որ այնտեղ կենսաբանական զենք են ստեղծում»,- ասաց Գրիգոր Գրիգորյանը: Այն, որ Ռուսաստանն անհանգստացած է Հայաստանում ԱՄՆ-ի ֆինանսավորմամբ կենսաբանական լաբորատորիաների ստեղծման փաստով, անցած տարի դեկտեմբերին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ էր թաքցրելնաև Սերգեյ Կոպիրկինը (Ռուսաստանի դեսպանը Հայաստանում): Նա վստահեցրել էր, որ ռուս մասնագետների՝ այդ լաբորատորիաներ մտնելու և ստուգումներ անելու մասին կառուցողական երկխոսությունը շարունակվում է[97]:

Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքի քաղաքային դումայի պատգամավոր Ալեքսեյ Վինոգրադովը սև ներկով ներկել էր հայկական եկեղեցու տարածքում տեղադրված հուշատախտակը, որը նվիրված էր հայ ռազմական և քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհին[98]: Այս գործողությանը արձագանքել էր Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Դեսպանատան ֆեյս-

97 https://168.am/2019/11/18/1205717.html
98 https://mamul.am/am/news/165072

բուքյան էջում մասնավորապես գրված է. «Կրասնոդարի երկրամասի Արմավիրի քաղաքային դումայի պատգամավոր Ալեքսեյ Վինոգրադովի գործողությունները մեր կողմից դիտարկվում են որպես Հայ առաքելական եկեղեցու տարածքում վանդալիզմի գործողություն և ինքնիրավչության դրսևորում, որը հակասում է սահմանված իրավական կարգին: Այս գործողությունները չեն համընկնում հայ-ռուսական հարաբերությունների ոգուն և կարող են հանգեցնել ազգամիջյան լարվածության:...»[99]: Սույն միջադեպը ևս լայն քննարկման առարկա դարձավ հիմնականում սոցիալական կայքերի հարթակում՝ ստանալով բավականին կոշտ արձագանքներ, որոնք հավելյալ առիթ հանդիսացան հայ-ռուսական հարաբերություններում լարվածություն և հայ հանրության բարկության առաջացման համար:

Դիտարկման մեկամսյակում միևնույն էլեկտրոնային կայքը (www.politik.am) առնվազն երկու նյութ է հրապարակել, որոնցում հանրությանը ներկայացվել է, որ վարչապետի գործողությունների հետևանքով Հայաստանում ավելանում է ռուսական ազդեցությունը, մասնավորապես ասվում է. «...Փաշինյանին ընդդիմադիր ուժերը փորձում են վստահեցնել հասարակությանը, որ հայ-ռուսական հարաբերությունները լարված են: ...Այս առումով Փաշինյանի համար կարևոր է հասարակությանը համոզել հակառակում: Հանուն սրա իշխանությունները պատրաստ են գնալ լուրջ զիջումների: Այս ամենը լավ են հասկանում նաև Ռուսաստանի Դաշնությունում և նրանք էլ փորձում են պահից օգտվել: Ու կարծես Ռոուսաստանին հաջողվել է լուրջ զիջումների հասնել: Օրերս Հայաստան ժամանեց ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն: Այցի ընթացքում հայտնի դարձավ, որ Հայաստանում տեղակայված ռուսական 102-րդ ռազմաբազայի մարտական ներուժը գրեթե կկրկնապատկվի՝ նոր ու արդիականացված սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրելուց հետո: Ըստ ամենայնի ահա սա է եղել մեր իշխանությունների զիջումը: Հայաստանում մեծանում է ռուսական զինվորականության ներկայացվածությունը, ըստ այդմ նաև կրկնապատկվում է եղած ազդեցությունը: Սա էական զիջում է, որը այդքան էլ համահունչ չէ Հայաստանի շահերին, քանի որ ավելանում է կախվածությունը ռազմավարական գործընկերոջից, որը անգամ նախկին իշխանությունների օրոք չի եղել[100]:...»:

Նույն կայքում զետեղված մեկ այլ հոդվածում հեղինակը դիրքորոշում է հայտնում, որ. «...Ժամանակին ռուսահաճության, ռուսահպատակության

99 https://mamul.am/am/news/165097

100 http://politik.am/pashinyani-zijumy-hanun-gazi-gni-rusakan-azdecutyuny-krknapatkvum-e

համար Հայաստանի իշխանություններին անխնա քննադատած ու դատապարտած Նիկոլ Փաշինյանը, փաստորեն ավելի ռուսահաճ ու ռուսահպատակ է, ժամանակակից լեզվով ասած՝ ադապտացված, քան նախորդները, ու սա պատահական չէ: Սիրիայի հյուսիս-արևելքում քրդական հայտնի գործողություններից հետո, թերևս հասկացավ, որ «իրեն խելոք չպահեց՝ հաջորդն ինքն է լինելու» ու որոշեց, էլ ավելի հպատակվել ռուսներին, հանուն սեփական աթոռը պահելու: Սա ցույց է տալիս նաև, որ մարդը հանուն աթոռի պատրաստ է ամեն ինչի[101]:»:

5.2 ԼԳԲՏ համայնքի իրավունքները եվ հանրային վերաբերմունքը

Ինչպես և նախորդ մշտադիտարկման ժամանակաշրջանում, այնպես էլ այս փուլում բավականին շատ էին ԼԳԲՏ համայնքին վերաբերող հրապարակումները, ինչպես նաև սոցիալական կայքերի առանձին օգտատերերի գրառումները, հատկապես, որ նշված մեկամսյակում, մի քանի միջոցառումներ են տեղ գտել Հայաստանում, որոնք առավել ակտիվացրել են այս թեմայի շուրջ քննարկումները: Մասնավորապես. «Տրանսվեստիտները ԼԳԲՏ ֆորում են անցկացրել Ծաղկաձորում» վերտառությամբ հոդվածում հեղինակը հայտնում է, որ. «2019թ.-ի նոյեմբերի 9-ից 10-ը Ծաղկաձորի «Կեչառիս» հյուանոցում տեղի է ունեցել ԼԳԲՏ ֆորում: «Ծիածան» խորագրով ֆորումը կազմակերպել է «Փինկ Արմենիա» հասարակական կազմակերպությունը, որը զբաղվում է միասեռականների խնդիրներով: Politik.am-ի աղբյուրի փոխանցմամբ՝ այդ երկու օրերին գրեթե ողջ հյուրանոցը զբաղեցրել են տրանսվեստինտներ՝ ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարար Արայիկ Հարությունյանընից ընդունելություն արժանացած հանրահայտ Կարաբինայի (Խոսքը գնում է հայտնի տրանսգենդերի մասին) գլխավորությամբ: Տրանսվեստիտները ողջ օրը աղմկել են ու զանազան միջոցառումներ իրականցրել, իսկ սրահի մուտք, որտեղ նրանք իրենց սովորաբար հավաքվել են հսկվել է թիկնապահների կողմից»[102]: Սույն հրապարակումը և ևս նույնաբովանդակ որոշ հոդվածներ խիստ բացասական արձագանք գտան սոցիալական հարթակում և ոչ միայն:

Տարաբնույթ քաղաքական գործիչներ տարբեր հարցազրույցներով հիմնականում խիստ ընդգծված բացասական վերաբերմունք էին դրսևորում ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ, այսպես օրինակ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սերգեյ Ատոմյանն

101 http://politik.am/pashinyany-hanun-atori-patrast-e-amen-banichokh-nver-rusastanin
102 http://politik.am/transvestitnery-lgbt-forum-en-anckacrel-tsaxkadzorum-lusankarner

իր հարցազրույցներից մեկուն անդրադառնալով Վիտալի Բալասանյանի հայտարարությանը, թե ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների 10 հազարից ավելի հոսք է սկսվելու, եթե Հայաստանում շարունակեն հանդուրժել նրանց, պատգամավորը նշեց, որ «ԼԳԲՏ համայնքին վերաբերվում եմ շատ վատ, իսկ այն, որ նրանք այս իշխանությունների օրոք Հայաստան կներթափանցեն, թյուր է»[103]:

ԱԺ մեկ այլ պատգամավոր, այս դեպքում ԲՀԿ ներկայացուցիչ Վարդան Ղուկասյանը լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ ասել էր. «Հետո էլ Պապ թագավորից եք խոսում, Պապ թագավորը «գալուբոյ» է եղել. ԼԳԲՏ-ները սատանայի կամակատարներն են, պետք է կառավարությունը վերցնեն»[104]:

ԲՀԿ խմբակցության մեկ այլ պատգամավոր Գևորգ Պետրոսյանն էլ աչքի է ընկնում իր դիրքորոշման պարբերական հանրայմանացմամբ հիշյալ թեմայի շուրջ, մասնավորապես վերջինս գրել էր. «Ընդամենը կարծիք... Էն, որ էսօր պետական ապարատում կան բազմաթիվ ծպտյալ գոմիկներ, դա փաստ է: Եթե գոմիկները կարծում են, որ իրենց կողմնորոշումը բնական է ու արդարացի, թող բացեիբաց հայտարարեն այդ մասին, խոստովանեն իրենց կողմնորոշումը, այնպես ինչպես մենք՝ ավանդական կողմնորոշման կրողներս... Ինչու՞, որպեսզի նրանց սեռական կողմնորոշման խնդիրը չդառնա համապետական քննարկումների առարկա... Ավելի կարևոր հարցեր կան՝ քննարկելու. Օտարերկրյա ներդրումներ, տնտեսական հեղափոխություն, բարձր տեխնոլոգիաների զարգացում, սոցիալական ապահովություն... Դե, տեսնենք, ով է առաջին «հերոսը»...[105]»:

Սակայն այսքանով հանրային անձանց կողմից սույն թեմայի շուրջ արտահայտությունները չեն սահմանափակվել: «Հայելու առաջ» հաղորդման շրջանակներում «Ադեկվադ» միաբանության համահիմնադիր Կոնստանտին Տեր-Նակալյանը հայտարարել էր, որ պետական համակարգի կեսը կամ գեյ է, կամ գեյլոյալ[106], ում արձագանքելով, իր ֆեյսբուքյան էջում գրառում էր կատարել Հանրային խորհրդի նախագահ[107] Ստյոպա Սաֆարյանը՝ նշելով. «Քոչնյուզի մոտ գեյացավ է... ինչ էլ շատացել են գեյերի մասնագետները...[108]»:

---

103 https://www.1in.am/2653802.html

104 https://www.facebook.com/yerevan.today/videos/vb.608041529315377/2702715783112098/?type=2&theater

105 https://analitik.am/news/view/565588

106 https://www.youtube.com/watch?v=3pQZJ_aS6HY

107 Մշտադիրատկման ժամանակահատվածում վերջինս դեռևս հանրային խորհրդի անդամ էր

108 https://armnice.ru/%D6%84%D5%B8%D5%B9%D5%B6%D5%B5%D5%B8%D6%82%D5%A6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%B8%D5%BF-%D5%A3%D5%A5%D5%B5%D5%A1%D6%81%D5%A1%D5%BE-%D5%A7%E2%80%A4%E2%80%A4%E2%80%A4%D5%AB%D5%B6%D5%B9-

Ակտիվիստ Նարեկ Սարգսյանի պնդմամբ՝ քանի որ «ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները մեծ ներդրում են ունեցել «հեղափոխության» գործում, այսօր պահանջում են դրա հատուցումը»: Ըստ ակտիվիստի՝ սրանով արտաքին ուժերը փորձում են ներսից քանդել Հայաստանը ու հակամարտություն ստեղծել հայերի միջև[109]:

Նշված ժամանակահատվածում, մեկ այլ զարգացում տեղ գտավ երկրում, որը հանրային հուզմունքի ալիք բարձրացրեց: Խոսքը գնում է «Մել» ֆիլմի նկարահանումների մասին լուրին: Ֆիլմը ծանրամարտիկ Մելինե (Մել) Դալուզյանի, նրա վերելքների և վայրէջքների մասին է: Ֆիլմի առանցքային թեման սիրող զույգի պատմություն է՝ սեռային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանելու նրանց պայքարը, միասին անցած ճանապարհը և այն, թե արտաքին ու ներքին ազդեցությունների տակ ինչպես են փոխվում Մելի ու Ծաղիկի (պայմանական անուն) փոխհարաբերությունները: «Մելը» 2019 թվականին Հայաստանի ազգային կինոկենտրոն ներկայացված 65 հայտերից երկրորդ փուլ անցած լիամետրաժ նախագծերի թվում է: Պետությունը ֆիլմի ֆինանսավորման համար հատկացրել է 20 միլիոն դրամ: Նշված ֆիլմի վերաբերյալ բազմաթիվ անձինք իրենց բացասական վերաբերմունքն հայտնեցին, մասնավորապես հոգեբան Միհրդատ Մադաթյանի կարծիքով՝ Հայաստանը չպետք է ունենա տրանսգենդեր «հերոսներ»[110]: Այս թեմայով բավականին մեծ հանրային արձագանք գրանցվեց, որին ի պատասխան ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարար Արայիկ Հարությունյանը լրագրողներին կոչ էր արել տուրք չտալ այն մարդկանց, որոնք փորձում են այս քողի տակ քաղաքական դիվիդենտներ շահել, քանի որ, նրա բնորոշմամբ, այդ մարդիկ հետադիմության առաջամարտիկներ են[111]:

Հատկանշական է, որ այս ֆոնին տեղական էլեկտրոնային պարբերականը նյութ էր տեղադրել այն մասին, որ Իրանում միասեռական է կախաղան հանվել. «Իրանում հրապարակավ մահապատժի են ենթարկել տղամարդու, որը մեղավոր է ճանաչվել համասեռամոլության մասին օրենքների խախտման համար: Այս մասին հաղորդում է The Jerusalem Post-ը, ըստ որի՝ դեպքը տեղի է ունեցել դեռևս այս տարեսկզբին, սակայն դրա մասին միայն նոր է հայտնի դառնում: Նշվում է, որ 31-ամյա իրանցին, որի անունը չի նշվում, կախաղան է բարձրացվել հունվարին Կազերուն քաղաքում: Նրան մեղադրել են տղամարդկանց հետ սեռական կապեր

%D5%A7%D5%AC-%D5%B7/

109 https://168.am/2019/11/04/1198382.html

110 https://armeniasputnik.am/society/20191028/20906628/kexm-te-dem-mel-vavaregrakan-fil-mi-shurj-krqery-chen-handartvum.html

111 https://168.am/2019/10/31/1197091.html

ունենալու, ինչպես նաև երկու 15-ամյա երեխաների առևանգման մեջ: Բացի այդ, ըստ իրանական ISNA գործակալության, քաղաքի բնակիչներն իրենց գոհունակությունը և շնորհակալությունն են հայտնել իրավապահ մարմիններին[112]:»

5.3. Բաց հասարակության հիմնադրամների-Հայաստան նկատմամբ վերաբերմունքը

Նախորդ մշտադիտարկման արդյունքում պատրաստված հաշվետվության մեջ հատուկ ակնարկով նշված էր, որ վերջին ամիսների ընթացքում, այն է՝ 2019 թվականի առաջին ամիսներին, մեծ թափ ստացավ Ջորջ Սորոսի հիմնադրամից (Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան) դրամաշնորհներ ստացող հասարակական կազմակերպությունների քննարկման թեման: Այս կազմակերպությունները հասարակությանը ներկայացվում են որպես ազգադավ, վտանգավոր հաստատություններ, որոնք ստանալով մեծ գումարներ Հայաստանում իրականացնում են օտարերկրյա շահերի սպասարկում:

Մշտադիտարկման սույն փուլում, մասնավորապես 2019 թվականի նոյեմբերի կեսին նոր զարկ ստացավ Բաց հասարակության հիմնադրամների-Հայաստան դեմ տարվող բացահայտ քարոզչությունն ու պարբերական ակցիաները:

Հատկանշական է, որ այս ժամանակաշրջանում հիմնական թիրախում են հայտնվել հասարակական կազմակերպությունները, որոնք ֆինանսավորվում են Բաց հասարակության հիմնադրամներից-Հայաստան և վարչապետ Փաշինյանը, ում թիրախավորողների մի խումբը մեղադրում էին այն բանում, որ վերջինս «հակադրվում է» այսպես կոչված «սորոսականներին», իսկ թիրախավորողների մյուս խումբը՝ ընդհակառակը, հանրությանը ներկայացնում էին, որ Փաշինյանը գտնվում է «սորոսականների» ազդեցության ներքո, ինչից նրան պետք է փրկել:

Առաջին խմբի քարոզչությունն առավել ցայտուն ներկայացված է սույն հոդվածում, որտեղ մասնավորապես ասվում է. «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և սորոսականների ջրերը կարծես թե դադարել են մեկ առվով հոսել: Բանն այն է, որ, եթե հեղափոխությունից հետո Նիկոլ Փաշինյանը իշխանության ներսում որոշակի տեղ ու լծակներ էր տալիս վերջիններիս, այսօր արդեն այդ իրավիճակը փոխվել է: Փաշինյանը հասկացել է, որ կարող է յոլա գնալ նաև առանց վերջիններիս օգնության, նրան անգամ չեն խանգարում հակասորոսական խմբերը ու ակցիաները, ավելին՝ դրանք

112 https://blog.168.am/blog/247253.html

նրան ձեռք են տալիս և այս իրավիճակը, սեփական խաղի կանոններով խաղալու Փաշինյանի ցանկությունը չի կարող չանհանգստացնել սորոսականներին: Վերջին ամիսներին վերջիններիս հռետորաբանությունը կտրուկ փոփոխություն է ապրել,եթե նախկինում, երբ Փաշինյանը հեռակա կարգով ՌԴ–ին մեղադրում էր ապրիլյան պատերազմը սանձազերծելու կամ այն հովանավորելու մեջ, նույն Իոաննիսյանը կամ Սաքունցը ծափահարում էին, հայտարարելով, որ ինքնիշխանությունը հենց դա է: Սակայն, երբ Փաշինյանը որոշեց ռևերանսներ անել ռուսական կողմին և օրինակ Սիրիա մարդասիրական օգնություն ուղարկել, թույլ տալ ռուսների մուտքը Հայաստանի տարածքում գործող կենսաբանական լաբորատորիաներ, այդ ժամանակ արդեն հարցադրումը այլ էր՝ սա՞ է արդյոք ինքնիշխանությունը: Սորոսականները վերջին ամիսներին Փաշինյանին թիրախավորում են գրեթե բոլոր ճակատներով՝ բյուջեից մինչև ուսանողների ոտնահարվող իրավունքներ: Ուշագրավ է, որ անգամ Սորոսի ֆոնդից սնվող «Ռեստարտ» նախաձեռնությունն է արթնացել ,մասնավորապես Դավիթ Պետրոսյանը սպառնալից տոնով պահանջել է չծաղրել դասադուլ անող ուսանողներին:Սա, ընդամենը, մեսիջ է, որ, եթե Փաշինյանը շարունակի շեղվել նախանշված ծրագրից և խաղալ ինքնուրույն, ապա սորոսականները կարող են վերջինիս հարվածել մեջքից՝ ավելացնելով վարչապետի և իր թիմի քննադատողների առանց այդ էլ օրեցօր աճող շարքերը»[113]:

Երկրորդ խմբի դիրքորոշումներն առավել հաճախ են հնչեցվել ինչպես հարցազրույցների, այնպես էլ սոցիալական կայքերում ներկա–յացվող հայտարարությունների միջոցով, սակայն միայն դրանով չեն սահ–մանափակվել. «ՎԵՏՕ» հասարակական–քաղաքական շարժումը նոյեմբերի 20–ին բողոքի ցույց էր իրականացնել Ջորջ Սորոսի «Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան» գրասենյակի դիմաց՝ «Ազատություն Նիկոլ Փաշինյանին» կարգախոսով, որին նախորդած ժամանակահատվածում տարածված հայտարարության մեջ նրանք հայտարարել էին, որ «ՎԵՏՕ» շարժումը բազմիցս նշել է, որ ՀՀ–ում իշխանությունը զավթել է օտարերկրյա գործակալական ցանցը և թիրախավորել պետության համար կենսական բոլոր ոլորտները:...Փաստացի պետությունում ստեղծվել է իրավիճակ, երբ սորոսականներն, ըստ էության, պատանդ են վերցրել երկրի վարչապետին և ստիպում են շարժվել իրենց օրակարգի համաձայն՝ հետևողականորեն քանդելով պետության հիմնասյուն հանդիսացող ինստիտուտները: Ուստի մեր պահանջն է օր առաջ ազատել վարչապետին այդ պատանդառությունից[114]»:

113 https://lurer.com/?p=344563&l=am
114 https://zham.am/?p=49427&l=am

Վերոհիշյալ երկրորդ խմբի տեսակետը ներկայացվել է մի շարք հոդվածներում, որոնցից մեկում մասնավորապես ասվում էր, որ. «Ակն-հայտ է, որ սորոսականների մոտ վերջին ամիսներին տեղի է ունե-նում, այսպես ասած, ուժերի մոբիլիզացիա: Բացի «Ռեստարտ»-ից, բազմաթիվ այլ ՀԿ-ներ, անգամ մարզային հեռուստաընկերություններ, վերջին ամիսներին Սորոսի հիմնադրամից կլոր գումարներ են ստացել՝ դատական համակարգի բարեփոխումների շուրջ քննարկումներ ծավալելու համար: Այս աժիոտաժը կարող է ունենալ երկու բացատրություն: Կամ Նիկոլ Փաշինյանը, հասկանալով, որ դատական համակարգը տեղի չի տալիս, որ ուժայինները դեռևս դիմանում են պրեսինգին և իր տոտալ վերահսկողության տակ չեն, փորձում է սորոսականներին մոբիլիզացնելով ստանալ այդ վերահսկողությունը: Սակայն, կա նաև այլ տարբերակ. այն, որ սորոսականները չեն էլ թաքցնում իրենց ամբիցիաները և նպատակները, իսկ նպատակը ԱԱԾ և ոստիկանության ղեկավարությունը ստանձնելն է: Սա փաստացի մեսիջ է Նիկոլ Փաշինյանին, որ իրենք կարող են էականորեն խանգարել Փաշինյանին, եթե չստանան այդքան բաղձալի պաշտոնները[115]:»:

Մեկ այլ յութուբյան հոլովակում ներկայացվել են, ըստ հեղինակի «Սորոսական» դրամաշնորհները մարզերի հեռուստաընկերություններին[116]:

Հատկանշական է, որ մշտադիտարկման ժամանակահատվածում քննարկման առարկա էր դարձել դիակիզարանների ստեղծման հարցը, որի վերաբերյալ «ՎԵՏՕ» շարժման հիմնադիրը հայտարարություն էր տարածել՝ նշելով. «... դիակիզարանների մասին արհեստական օրակարգը ամբողջությամբ Սորոսի գրասենյակի կողմից ուղղորդվող գործընթաց է, որը սկսվել է տարիներ առաջ: Դեռևս 2013 թվականին սորոսական Հովհաննես Հովհաննիսյանը Սորոսի գրասենյակի պատվերով և ֆինանսավորմամբ հրապարակել է «Գերեզմանոցներ, դիակիզարաններ թե այլ լուծումներ» աշխատությունը, օրակարգ բերելով ՀՀ-ում թաղման ծեսերի փոփոխության հարցը: Սորոսի գրասենյակի նպատակը ամբողջ աշխարհում և մասնավորապես մեր երկրում՝ պայքարն է ավանդույթի դեմ: Սույն փաստով ես տեղեկացնում եմ, որ Սորոսի գրասենյակից ֆինանսավորվող նմանօրինակ արշավներով կատաղի պայքար է տարվում ազգային ավանդությունների և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ[117]»:

Հաճախ հանրային ելույթների և հարցազրույցների ժամանակ որպես հաստատված փաստ ներկայացվում է այն, որ Սորոսը տարբեր երկրներում

115 https://lurer.com/?p=345642&l=am

116 https://www.youtube.com/watch?time_continue=81&v=P0nlZQ3LfTc&feature=emb_title

117 https://news.am/arm/news/546589.html

գունավոր հեղափոխություններ ֆինանսավորող և աջակցող կառույց է, որը հայաստանյան կազմակերպություններին ֆինանսավորելով բնավ չունի բարեգործական նպատակներ: Առավել համոզիչ ներկայանալու համար թվարկվում էն ստորև ներկայացված կազմակերպությունների և դրանց ղեկավարների անունները, վերջիններիս պիտակելով որպես օտարերկրա պետությունների շահերը սպասարկող և Հայաստանի ու նրա հետ դաշինք կազմող երկրների շահերին հակոտնյա փորձագիտական կարծիքներ հայտնող ու տարածող փորձագետներ. Որոշ թշնամաբար տրամադրված կազմակերպությունների (այնպիսիք ինչպիսիք են «ՎԵՏՕ» շարժումը և «Ադեկվադ» միաբանությունը) թիրախում են հայտնվում ինչպես Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպությունը, այնպես էլ մի շարք պրոդեմոկրատական հայաստանյան կազմակերպություններ, ինչպես օրինակ Լևոն Բարսեղյանի ղեկավարած «Ասպարեզ Ժուռնալիսների Ակումբ» ՀԿ, Արթուր Սաքունցի ղեկավարած «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ, Ստեփան Գրիգորյանի ղեկավարած «Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» ՀԿ, Լարա Ահարոնյանի ղեկավարած «Կանանց ռեսուրսային կենտրոնը», Դանիել Իոանննիսյանի ղեկավարած «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ, Գրիգոր Երիցյանի ղեկավարած «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ, Սոնա Այվազյանի ղեկավարած Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, «Ռեստարտ» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնությունը, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» և այլն:

5.4. Սոցիալական ցանցերի կեղծ օգտատերերը

Վերջին ժամանակաշրջանում աննախադեպ մեծ ծավալների են հասել սոցիալական ցանցերի կեղծ օգտատերերի քանակը, որոնք անհանդուրժողականություն, ապատեղեկատվություն, ատելություն և պիտակավորումներ տարածող հիմնական դերակատարներն են դարձել: Պիտակավորումներ, ծաղր, ատելության քարոզ հիմնականում իրականացվում է քաղաքական ուժերի կամ առանձին վերցված քաղաքական գործիչների նկատմամբ, որով խորացվում է հանրային անհանդուրժողականությունն ու հասարակական հակամարտող ճամբարների ձևավորումն ու տարանջատումը: Այդ իրավիճակում կատարյալ անհանդուրժողականության մթնոլորտ է ստեղծվում այլախոհության ու ընդդիմախոսության նկատմամբ՝ տարբերվող կարծիք ունեցող անձանց որպես ազգի դավաճաններ և բարեփոխումներին խոչընդոտողներ ներ-

կայացնելով: Այնուամենայնիվ, սակավաթիվ չեն նաև գործող իշխանությանը քննադատող և պիտակավորող կեղծ օգտատերերը: «Կեղծ օգտատերեր»-ի առկայությունը դարձել է յուրօրինակ գործիք՝ հասարակական կարծիքի ձևավորման և ուղղորդման համար, որը մտահոգիչ է դառնում, քանի որ այդպիսի ուղղորդված և կազմակերպված քարոզչության արդյունքում ստացվում է կայացնել հասարակական հստակ վերաբերմունք՝ այս կամ այն երևույթի կամ անձի/անձանց նկատմամբ: Առավել քան մտահոգիչ է, որ ատելության խոսքն ու հակաքարոզը վերջին ժամանակահատվածում ստացել են նաև գործողության կոչերի ձև:

5.5 Ստամբուլյան կոնվենցիայի հանդեպ հանրային վերաբերմունքը

Մշտադիտարկման ժամանակահատվածում հասարակությանը ճակատների բաժանող ևս մեկ արդիական թեման հանդիսանում էր Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը Հայաստանի Հանրապետության կողմից: Այս թեմայի շուրջ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն իր տարածաց հայտարարության մեջ նշել էր. «Միտումնավոր խեղաթյուրումների ու փաստերի աղավաղման պակաս չկար. օնլայն և տպագիր մամուլը, սոցիալական ցանցերը գուժում են՝ Ստամբուլյան կոնվենցիան դուռ է բացում այլասերված բարքերի, հայ ընտանիքի ու հայոց եկեղեցու քայքայման, միասեռական ամուսնությունների համար, երեխային կտրում է ծնողներից, փչացնում է մեր ավանդույթները և այլն: Ընդ որում՝ այս թեմայով «մասնագիտացված» որոշ լրատվամիջոցներ բավականին հեշտ են գտնում մարդկանց, որոնք պատրաստ են խեղաթյուրել իրականությունը, կանխակալ մեկնաբանություններ տարածել ու ատելության խոսքեր շռայլել[118]»:

Նոյեմբերի 2-ին Երևանի մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի հարակից տարածքում «ՀուՁանք ու Ձանգ» ներկայացում էր ցուցադրվել: Պետությունից 2 միլիոն 700 հազար դրամ ստացած ներկայացումը շատերի կողմից որակվել էր սատանիստական ու ապազգային, արժանացել էր մտավորականության զգալի հատվածի մեղմ ասած քննադատություններին և հենց տեղում ուղեկցվել էր բռնությամբ: Հատկանշական է, որ նշված ներկայացման ընդդիմախոսներն այն ուղղակիորեն կապում էին Ստամբուլյան կոնվենցիան Հայաստանի կողմից վավերացնելու հետ՝ պնդելով, որ այն այդ կոնվենցիայով տրվող ազատությունների հետևանքն է[119]: Ներկայացման ընթացքում, որն

118 https://www.aravot.am/2019/11/12/1077444/

119 https://a1plus.am/hy/article/352468

ուղեկցվում էր մի քանի անձանց «ամոթ, ամոթ» վանկարկումներով նաև միջադեպ գրանցվեց: Մի երիտասարդ փորձեց 22ով «զելյոնկա» լցնել ներկայացման մասնակիցների վրա: Նա հայտարարում էր, որ «սատանիստների» է լցնելու զելյոնկան: «Իմ երկրում սատանիստական երևույթ չի լինելու: Ես պայքարելու եմ, ինչքան ուզում եք բռնեք: Ես իրենց վրա զելյոնկա եմ լցնելու»,- բղավում էր Նարեկ Սարգսյան ներկայացած երիտասարդը: Ոստիկանները նրան բերման ենթարկեցին[120]»:

2019 թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Պետահիրավական հարցերի և Եվրոինտեգրման հարցերի համատեղ փակ նիստ էր գումարվել, որին մասնակցում էին նաև ԵԽ ներկայացուցիչներ՝ Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ Վերոնիկա Բելկովան և Գրեվիոյի (GREVIO) նախագահ Մարսելին Նաուդին: Փակ նիստում քննարկվել են նաև Ստամբուլյան կոնվենցիային, դրա վավերացմանը, առկա կարծրատիպերին վերաբերող հարցեր: Նիստերին զուգահեռ ԱԺ-ի դիմաց բողոքի ակցիա էին կազմակերպել «Կամք» հասարակական նախաձեռնության անդամները, նրանց էին միացել նաև «ՎԵՏՕ» հասարակական-քաղաքական շարժման անդամները: Բողոքի կազմակերպիչ «Ո՛չ Ստամբուլին, ո՛չ այլասերմանը» նախաձեռնությունն Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը դիտարկում է որպես միջամտություն Հայաստանի ներքին գործերին, ինչպես նաև համարում հայ ժողովրդի ազգային, հոգևոր և ավանդական ընտանեկան արժեհամակարգի դեմ ուղղված քայլ[121]:

Հատկանշական է, որ մամուլում տեղ է գտել նաև նոյեմբերի 29-ին, «Ազգային օրակարգ» կուսակցության խորհրդի կազմակերպած՝ Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը իրավական հակազդման թեմայով կլոր սեղան-քննարկման ժամանակ Բուլղարիայի խորհրդարանի պատգամավոր Ալեքսանդր Սիմովի ելույթից այն հատվածը, որտեղ նա փաստում է, որ Սլովակիան և Խորվաթիան մերժել են Ստամբուլյան կոնվենցիան: Եվ կոնվենցիան Եվրոպային վերաբերող հարց չէ, այլ, օրինակ, դպրոցական կրթության, երեխաների դաստիարակության հարց: «Ստամբուլյան կոնվենցիան մեծ թակարդ է, և դուք պետք է մերժեք դա: Մեր երկրում ամերիկյան գումարներով գործող հասարակական կազմակերպություններից մեկը՝ «Ամերիկան հանուն Բուլղարիայի» ՀԿ-ն, հանրությանը ցույց էր տալիս պաստառ՝ 2 տղամարդ՝ ձեռք ձեռքի, և գրառում՝ «սա միայն սեր է»: Սա կործանում է մարդկային հարաբերություններն ու արժեքները»,- խոսքը եզրափակեց Բուլղարիայի

120 https://news.am/arm/news/542370.html
121 http://panarmenian.net/arm/news/274600

խորհրդարանի պատգամավոր Ալեքսանդր Սիմովը:[122]

5.6. Քաղաքական անհանդուրժողականությունը

Քաղաքական անհանդուրժողականության բազմաթիվ վառ օրինակներ ներկայացված են վերևում՝ ըստ առանձին լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքների, այս հատվածում կներկայացվեն այն տեսակետներն ու հրապարակումները, որոնք դուրս են եղել համակարգային մշտադիտարկման ենթակա ծրագրերից:

Հարկ է նկատել, որ քաղաքական խիստ ընդգծված անհանդուրժողականության ալիքը բարձրացավ հեղափոխությունից հետո, իսկ առավել մեծ թափ ստացավ 2018 թվականի պառլամենտական և Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ժամանակ, երբ հենց քաղաքական ուժը հանրությանը բաժանեց այսպես կոչված սպիտակ ու սև ուժերի, սպիտակ անվանելով նրանց, ովքեր իրենց սատարում է, իսկ սև՝ այն ուժերին, ովքեր կհայտնվեն ընդդիմախոսի դերում գործող իշխանությանը:

Ցավալի է, որ ներկա ժամանակաշրջանում փոխադարձ անհանդուրժող ու վիրավորական արտահայտությունների տարածման պակաս չի նկատվում: Բավականին հաճախ կարելի է լսել անհանդուրժողական և վիրավորական արտահայտություններ ինչպես գործող ուժի ներկայացուցիչների կողմից, այնպես էլ վերջինիս թիրախավորողների կողմից:

Մասնավորապես՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2019 թվականի նոյեմբերի 13-ին ելույթ ունենալով Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, օգտագործեց այնպիսի արտահայտություններ, որոնք մշտադիտարկման թեմաների շրջանակում էին ներառված: Այսպես, նա խոստացել էր ասֆալտին պառկեցնել նրանց, ովքեր կսպառնան «օրենքով գողերի» նկատմամբ քրեական պատիժ սահմանող նախագիծը զեկուցող պատգամավորներին: Ինչպես նաև արձագանքելով քննարկան ժամանակ տեսակետ հայտնած պատգամավորի ելույթին Փաշինյանն ասել էր, որ. «..մարդը, որը թալանել է ՀՀ երկրորդ քաղաքի կեսը, թող չթպրտա, թե չէ կտան պատերով: Վարչապետը նշեց, որ այս ամենը պետք է ականջներին օղ անեն, եթե չանեն, իր ներկայացրած տեսարանները իրականություն կդառնան[123]»:

Ստեղծված նման իրավիճակում Նիկոլ Փաշինյանին քննադատողների բառամթերքը ևս հաճախ տարակուսանք ու մտահոգություն է առաջացնում, մի քանի այդպիսի տիպային օրինակներ բերված են ստորև. «Բացարձակ

122 https://www.yerkir.am/news/view/187419.html

123 https://armeniasputnik.am/society/20191113/21087638/Kparkecnenq-asfaltin-u-ktanq-paterov-bari-bun-imastov-um-vra-e-zayracel-Pashinyany.html

ստախոս Նիկոլ Փաշինյանը դարձել է սահմանափակ ստախոս Փաշինյան. Վոլոդյա Հովհաննիսյան[124]», «Հայաստանի վրա խարան է քեզ նմանին վարչապետ ունենալը. Զաքար Խոջաբաղյանը՝ Փաշինյանին[125]», «Հանրապետությունում առաջին և վերջին չարիքը Նիկոլ Փաշինյանն է՝ Գուրգեն Եղիազարյան[126]»:

124 http://159.69.84.120/?p=155169&l=am

125 https://www.yerkir.am/news/view/186452.html

126 https://4news.am/2019/11/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-%D6%87-%D5%BE%D5%A5%D6%80%D5%B-B%D5%AB%D5%B6-%D5%B9/

VI. ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

6.1. «Առավոտ» օրաթերթ

Լույս է տեսնում շաբաթը հինգ օր (լույս չի տեսնում կիրակի և երկուշաբթի օրերին): Մշտադիտարկվել են թերթի 209/6043 համարից մինչև 230/6064 համարները: Թերթը զերծ է մնացել բռնության կոչեր, ատելության խոսք և պիտակավորումներ պարունակող նյութեր հրապարակելուց:

Թերթի լույս տեսած բոլոր համարներում առկա են թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանի խմբագրականները: Գրեթե բոլոր խմբագրականները ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ են: Արամ Աբրահամյանը իր խմբագրականներում զերծ է մնացել պիտակավորումներ և վիրավորանքներ պարունակող արտահայտություններից և ներկայացրել է օբյեկտիվ վերլուծություններ:

Թերթում առկա է 4 նյութ Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ՝

- տեղ գտած «ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտը՝ «Կոնվենցիայի ստամբուլյան լեզվի» մասին» վերտառությամբ հոդվածում անդրադարձ է կատարվում, որ կատարվել է անհաջող թարգմանություն և առկա են սխալներ, և գուցե հենց դրա պատճառով կա թյուրըմբռնում:
- տեղ գտած «Իլիանա Բալաբանովան՝ Ստամբուլյան կոնվենցիայի և թյուրընկալումների մասին» վերտառությամբ հոդվածում Իլիանա Բալաբանովան պատմում է, որ կոնվենցիան ոչ թե ԼԳԲՏ համայնքի պաշտպանության, այլ ընտանեկան բռնության դեմ կոնվենցիա է:
- տեղ գտած «ՀՀ-Վրաստան զուգահեռներ: Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը Վրաստանում չեն ընդդիմացել» վերտառությամբ հոդվածում գրված է, թե ինչ պայմաններում է ընդունվել Ստանբուլյան կոնվենցիան Վրաստանում, և անցկացվում են համեմատականներ ներկայիս Հայաստանի իրավիճակի հետ:
- տեղ գտած «Ստամբուլյան կոնվենցիայի նպատակը ընտանեկան բռնության կանխարգելումը չէ, այլ գենդերային գաղափարախոսության ներդրումը դպրոցներում» վերտառությամբ հոդվածում բուլղարացի պատգամավոր Ալեքսանդր Սիմովը ներկայացնում է, թե ինչու Բուլղարիան չի վավերացրել կոնվենցիան և ցույց տալիս դրա ոչ լուրջ հետևանքները:
- նրան, որ չորս նյութից ընդհամենը մեկն էր Ստամբուլյան կոնվենցիան ներկայացնում բացասական տեսանկյունից, այնուամենայնիվ պետք է նշել, որ թերթը ներկայացրել է երկու զուգահեռ

բևեռների տեսակետները:

- կա «Հիմա ավելի շատ կարող ենք աշխատել հասարակության հետ, նպաստել քաղաքացու արժանապատվության վերականգնմանը» վերտառությամբ մի հոդված, որը պատրաստվել է ԵՄ և Բաց հասարակության հիմնադրամներ ֆինանսական աջակցությամբ: Հոդվածը իրավապաշտպան և «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ հիմնադիր Լարիսա Ալավերդյանի գործունեության մասին է:

Թերթում Սիրիայի մասին լուրերը հիմնականում կապված են Թուրքիայի կողմից Սիրիայի հյուսիսում իրականացված «խաղաղության ակունք» ռազմական գործողության հետ:

Թերթում տեղ գտած Թուրքիայի և ԱՄՆ-ի մասին հոդվածները կապված են ԱՄՆ Սենատում քննարկումով և ապա ընդունված «Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև»-ի հետ: Մասնավորապես, ներկայացվում են Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և ԱՄՆ նախագահի հանդիպումը և հանդիպման ընթացում նրանց կողմից քննարկված թեմաները: ԱՄՆ Սենատի կողմից «Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև»-ի մասին վերլուծականներ չկան:

Թուրքիայի մասին առկա է նաև նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և «Արդարություն և զարգացում» կուսակցության խորհրդարանական խմբակցության հետ հանդիպման մասին դիտարկումներ, որտեղ քննարկվել են Էրդողանի ԱՄՆ կատարած այցը և Դոնալդ Թրամփի հետ նրա հանդիպումը: Առկա է նաև նյութ Թուրքիայի Անվտանգության խորհրդի կայացած նիստից, որտեղ քննարկել են Հայոց ցեղասպանության հարցը և Սիրիայի հյուսիսում Թուրքիայի կողմից իրականացված «խաղաղության ակունք» ռազմական գործողությունը:

Տարածաշրջանային հարցերից թերթում տեղ են գտել Վրաստանում տեղի ունեցող ցույցերն ու իրադարձությունները: Հոդվածներից մեկում ներկայացվում է ցույցերի պատճառները և հղում կատարելով BBC լրատվական գործակալությանը՝ նշում, թե ցույցերի ընթացքում քանի վիրավոր և ձերբակալված մարդ կա:

6.2. «Իրավունք» եռօրյա թերթ

Լույս է տեսնում շաբաթը երեք անգամ՝ երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ: Մշտադիրատկվել են թերթի 119(3170) համարից մինչև 131(3182) համարը:

Սիրիայի մասին նյութեր չկան:

Բռնության կոչեր պարունակող նյութեր չկան, բայց բոլոր նյութերում կան պիտակավորումներ և վիրավորական արտահայտություններ ուղղված

իշխանություններին: Թերթի բոլոր համարներում մեծ տեղ է հատկացված իշխանություններին վիրավորելու և պիտակավորելու համար և միևնույն ժամանակ բոլոր համարներում առկա են ծաղրանկարներ իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ինչպես մյուս դիտարկված թերթերում, այնպես էլ այստեղ առկա էր նյութ ԱՄՆ Սենատի կողմից հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի մասին, բայց նույնիսկ այս դեպքում էլ թերթը անդրադարձել էր ՀՀ իշխանությունների «վատ» աշխատանքին: Մասնավորապես, նշվում է, որ այս որոշումը հավելյալ դիվանագիտական գործիք է մեր ձեռքում, բայց ներկայիս իշխանությունները դժվար կարողանան այն կիրառել, քանի-որ բավականաչափ կոմպետենտ չեն: Նաև նշվում է, որ գործող իշխանությունները փորձել են իրենց վերագրեն այս որոշումը, բայց սա նախորդ երկու նախագահների (Սերժ Սարգսյան և Ռոբերտ Քոչարյան) աշխատանքի արդյունքն է, բայց նույն համարի մեկ այլ հոդվածում գրում են, որ այստեղ հայկական կողմի արժանիքները հաշվի չեն առել, և ԱՄՆ-Թուրքիա լարված իրավիճակում ԱՄՆ-ն ցույց է տալիս Թուրքիային, որ կարող է այս տարբերակով պատժել Թուրքիային:

- համարում «Վրաստանում հիմա էլ «Երկնագույն հեղափոխություն» են փորձում անել» վերտառությամբ նյութի սկզբում անդրադարձ է կատարվում Իրանում բենզինի գնի բարձրացման հետ կապված ցույցերին և թե ինչպես են ցրվում այդ ցույցերը, ապա անդրադառնում է Վրաստանում ծավալվող իրադարձություններին, որոնք կապված են Վրաստանում արտահերթ ընտրությունների կազմակերպման ցանկության հետ: Նյութում անդրադարձ է կատարվում նաև ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների մասնակցությանը այդ ցույցերին: Նյութում խոսվում է ԱՄՆ-ի Իրանի հանդեպ կիրառված պատժամիջոցների, ԱՄՆ-ի և ԵՄ-ի ակնկալիքների մասին Վրաստանից: Ապա թերթի հաջորդ համարում՝ 127 (3178) «Վրացական «Երկնագույն հեղափոխության» արմատները խորն են» վերտառությամբ նյութում շարունակվում է խոսել Իրանում և Վրաստանում ծավալված գործողությունների մասին, բայց այս անգամ ավելի շատ խոսքը գնում է տնտեսական արդյունքերի մասին, մասնավորապես, թե ինչ տնտեսական հետևանքներ է ունեցել Վրաստանը ՌԴ-ի հետ ավիափոխադրումները կասեցնելուց հետո: Ապա հերթական անգամ անդրադարձ է կատարվում ԼԳԲՏ համայնքի մասնակցությանը Վրաստանում ծավալված գործողություններին, ապա նաև նրան որ ՀՀ-ում հենց իշխանություններն են ֆինանսական աջակցություն ցուցաբերում ԼԳԲՏ համայնքին:

- տեղ գտած «Բիշքեկը կտեղաշարժի՞ Արցախյան գործընթացը» վերտառությամբ հոդվածում սկզբում անդրադարձ է կատարվում ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանին նշելով, որ նա չի գտնում իր տեղը և որ չգիտի թե ինչով պետք է զբաղվի առաջին տիկինը, ապա անդրադառնում են Աննա Հակոբյանի՝ Արցախի մասով կատարած հայտարարություններին, մասնավորապես նշվում է ***«փամփուշտներից զարդեր ձուլել»***-ուն: Հետո անդրադառնալով վարչապետին նշում են, որ Նիկոլ Փաշինյանը մեկ տարի զանգում է Իլհամ Ալիևին և խնդրում, որ նա էլ հանդես գա հայտարարությամբ և նշի, որ «Հակամարտությունը պետք է կարգավորել Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի ժողովուրդների շահերից ելնելով»: Ապա անդրադառնալով Ալիևի մասնակցությամբ Բաքվի պետհամալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ Ալիևի այն հայտարարությանը, որում նա նշում էր, որ դեմ է եվրոինտեգրմանը և պետք է պաշտպանել և զարգացնել ավանդական արժեքները, դրանով Ադրբեջանը քայլ է անում իր պետության ամրապնդմանը, իսկ Հայաստանում համառորեն առաջ են տանում Ստամբուլյան կոնվենցիան, որը միտում ունի թուլացնելու Հայաստանում ավանդական արժեքները, այդպիսով թուլացնելով նաև Հայաստանը, և այս ամենով Ադրբեջանը ավելի լավ հարաբերությունների է գնում Ռուսաստանի հետ և նրանց չի հետաքրքրում, թե ինչ են մտածում ուլտրալիբերալ հարթակներում: Եվ այս հոդվածը զբաղեցնում է մի ամբողջ էջ. հոդվածի վերջում կա մի փոքր մաս որտեղ գրվում է, որ հաշվի առնելով այս ամենը՝ Նիկոլ Փաշինյանը Բիշքեք է ներկայացել մի փոքր «բագաժով»:

Պետք է նշել, որ թերթում չկա օբյեկտիվ քննադատություն և վերլուծություններ, փոխարենը թերթում Ռուսաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի մասին հոդվածներում տեղ են գտել հոդվածներ, որոնք ներկայիս իշխանություններին պիտակավորող և վիրավորող նյութեր են պարունակում, ներկայիս իշխանություններին կապում Սորոսի հետ և ներկայացնում, թե Հայաստանում՝ Ստամբուլյան կոնվենցիան ընդունելով փորձ է արվում թուլացնել Հայաստանում ազգային արժեքները և Հայաստանը դարձնել կամակատար երկիր:

6.3. Հրապարակ օրաթերթ

Լույս է տեսնում շաբաթը հինգ օր (լույս չի տեսնում կիրակի և երկուշաբթի օրերին): Մշտադիտարկվել են թերթի 197 (2721) համարից

մինչև 219 (2741) համարները: Իրանի, ՌԴ–ի և Սիրիայի վերաբերյալ նյութեր չկան: ԱՄՆ–ի և Թուրքիայի մասին կան նյութեր որոնք կապված են ԱՄՆ սենատի կողմից հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևին:

Թերթի տարբեր համարներում առկա են պիտակավորումներ և վիրավորական արտահայտություններ: Թերթի բոլոր համարներում կան խմբագրականներ: Խմբագրականները վերաբերում են ներքաղաքական իրադարձություններին, խմբագրականներում անդրադարձ է կատարվում թե՛ նախկին, թե՛ ներկա իշխանություններին և երկու դեպքում էլ կարող ենք նշել, որ անդրադառնում են կոպիտ բառապաշարով և հաճախ օգտագործվում է պիտակավորում:

Պիտակավորումները և վիրավորական արտահայտությունները հիմնականում կապված են Սորոսի և Ստամբուլյան կոնվենցիայի հետ: Թերթի դիտարկման ժամանակահատվածում հիմնական նյութերը կապված են «Բարձրագույն կրթության» մասին օրենքում փոփոխությունների, որոնք ենթադրում են հայոց լեզվի և հայոց պատմության առարկաները ոչ պարտադիր դարձնելը, այս պատճառով ՀՅԴ երիտասարդական կառույցի և այլ ուսանողների կողմից ԿԳՄՍ նախարարի հրաժարականի պահանջով ցույցերի, «ՀուՁանք ու զանգ» ներկայացման և Մելինե (Մել) Դալուզյանի մասին ֆիլմին դրամաշնորհ հատկացնելու որոշումների վերաբերյալ: Եվ քանի–որ այս բոլոր թեմաները կապված են ԿԳՄՍ նախարարության հետ, այդ իսկ պատճառով թերթի կողմից թիրախավորվում է նախարար Արայիկ Հարությունյանը: Թերթում այս ամենը ներկայացվում է որպես ապազգային քաղաքականություն:

Թերթում նկատվեց երկու դեպք երբ Զարուհի Բաթոյան (Խոսքը գնում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար) անուն ազգանվան փոխարեն օգտագործվել էր Զառա Բաթոյան և Գուրգեն Օսիպյանի փոխարեն Գուգո Օսիպյան:

Թերթում շատ են Սորոսի և Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ նյութերը:

Թերթում Ստամբուլյան կոնվենցիան ներկայացվում է, որպես ԼԳԲՏ համայնքին արտոնություններ տրամադրելու, ամուսնության և այլ առա–վելություն տրամադրելու հնարավորություն:

- նվեր չէ» վերտառությամբ նյութում, նյութի հեղինակը նշում է, որ Հայաստանում կայացած հեղափոխությունը Արևմտյան երկրների և ուժերի օգնությամբ է կայացել, մասնավորապես Սորոսի գումարներով:
- «Իսկ որտեղ է այդ Արիաստանը» վերտառությամբ հոդվածում նյութի հեղինակը, չնշելով, թե ով է խոսքի հեղինակը, կատարել է մեջբերում «Ում եք ինչ բացատրում, չեք տեսնում նրա եմիշանման

գլուխը, նա թուրք է»:

- լայնորեն «Բացել» է Օվերտոնի պատուհանը» վերտառությամբ հոդվածը պատմում է, որ հեղափոխության օրերին բազմաթիվ մասնակիցներ ներկայացնում էին Սորոսի հիմնադրամը ու ուշադիր մարդիկ կնկատեին, որ այդ օրերին չկար ազգային ոգեշնչող երաժշտություն, որ անգամ Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո հնչում էր ռոք, բայց ոչ ազգային երաժշտություն, որ հեղափոխության օրերին ԱԺ ամբիոնից Արարատ Միրզոյանը ու Լենա Նազարյանը բաց թողեցին գունավոր ծուխ, որը ԼԳԲՏ համայնքի դրոշն է: Ապա, թե ինչպես է հետո Նիկոլ Փաշինյանը մեծ շուքով ընդունում համասեռամոլության խորհրդանիշ Էլթոն Ջոնին, ապա թույլ են տալիս տրանսգենդեր կնոջ ելույթ ԱԺ ամբիոնից և ֆինանսավորում Մելինե (Մել) Դալուզյանի մասին պատմող ֆիլմը:

6.4. «Հայկական ժամանակ» օրաթերթ

Լույս է տեսնում շաբաթը հինգ օր (լույս չի տեսնում կիրակի և երկուշաբթի օրերին): Մշտադիտարկվել են թերթի 196/4782 համարից մինչև 217/4803 համարները:

Թերթում առկա են Իրանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Սիրիայի մասին հոդվածներ: Ի տարբերություն մյուս դիտարկված թերթերի՝ «Հայկական ժամանակ»-ի բոլոր համարների 7-րդ էջում հրապարակվում են լուրեր տարբեր երկրների մասին:

Թերթի բոլոր համարներում առկա են խմբագրականներ: Խմբագրականներում կամ ներկայացնում են իշխանության կողմից կատարվող բարեփոխումները դրական կոնտեքստում, կամ էլ խմբագրականները կրում են քննադատական բնույթ ՀՀԿ-ի կամ էլ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ:

«Հայկական ժամանակը» նաև, ի տարբերություն մյուս թերթերի, բոլոր հրապարակումների 7-րդ էջում ունի սպորտային բաժին, որտեղ ներկայացնում է Հայկական սպորտի անցուդարձը:

Թերթը զերծ չի մնացել պիտակավորում և վիրավորանք պարունակող նյութերից:

Առկա են նյութեր Ստամբուլյան կոնվենցիայի մասին:

- տեղ գտած «Խոսքը բռնության մերժման մասին է» հոդվածում անդրադարձ է կատարվում ՀՀ ԱԺ-ում ԵԽ պատվիրակության և պատգամավորների հանդիպմանը, որը կայացել էր փակ ֆորմատով: Հոդվածում հատուկ նշվում է, որ փակ ֆորմատով հանդիպում ցանկացել են ԵԽ ներկայացուցիչները: Հանդիպման

ընթացքում քննարվել են Ստամբուլյան կոնվենցիային առնչվող հարցեր: Հոդվածում հանդիպմանը անդրադարձել են երեք պատգամավորներ, որոնցից երկուսը քաղաքական մեծամասնություն ներկայացնող խմբակցությունից և մեկը ընդդիմությունից, երկուսը ավելի շատ անդրադարձ են կատարել փակ ֆորմատին, այլ ոչ թե քննարկման բովանդակությանը, իսկ ընդդիմության ներկայացուցիչը քննադատական խոսք էր ներկայացրել կոնվենցիային: Պետք է նշել, որ հոդվածի հեղինակը վերջում նշում է, որ ԵԽ խեղաթյուրող ընկալումներից խուսափելու համար 2010-ին տվել է հստակեցնող բացատրություն, թե ինչի մասին է կոնվենցիան:

- «Չի հասկանում» վերտառությամբ հոդվածում առկա է «դատարանների պատերի տակ վնգստացող դատավորներ» արտահայտությունը: Ռոբերտ Քոչարյանի պաշտպան Հայկ Ալումյանը, դիմելով ԲԴԽ, խնդրել էր որպեզսի իրեն տրամադրեն Նիկոլ Փաշինյանի կողմից նշված «դատարանների պատերի տակ վնգստացող դատավորներ»-ի ցուցակները:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի մասին.

- «Բանաձև՝ նաև Սենատում» վերտառությամբ հոդվածում անդրադարձ է կատարվել ԱՄՆ ներկայացուցիչների պալատի կողմից «Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձը» և ներկայացվում է, թե դա ինչ հնարավորություններ է ստեղծում: Ապա ներկայացնում է ԱՄՆ երեք իշխանության ճյուղերի մասին և ներկայացնում, թե ինչպես են դրանք գործում և եթե մյուս երկու մարմինն էլ ընդունի բանաձևը ինչ իրավիճակ կստեղծի: Նույն հոդվածի ներքև կա մի փոքր հոդված, որտեղ նաև ներկայացվում է Քիմ Քարդաշյանի դերը Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձի ընդունման գործում:

Սիրիայի մասին.

- «Պատերազմ նավթի համար» հոդվածում ներկայացված է Ամերկայի ձայնը լրատվական ծառայության հարցազրույցը վերլուծաբան Լորի Բլենքի հետ, ով ներկայացնում է իր կարծիքը Սիրաիայում կռվող կողմերի հետաքրքրությունը կապված Սիրիական նավթային պաշարների հետ:
- «Թրամփը հաստատել է» վերտառությամբ հոդվածում ներկայացվում է Associated Press-ի հոդվածը, որտեղ ասվում է, որ Թրամփը Պենտագոնում կայացած հանդիպման ժամանակ որոշում է կայացրել պաշտպանել նավթային տարածքները և ներկայացվում է ստրատեգիական տվյալներ:

Թուրքիայի մասին լուրեր կան գրեթե բոլոր համարներում: Թուրքիայի

մասին լուրերը հիմնականում պայմանավորված են Սիրիայում Թուրքիայի կողմից ծավալած գործողություններով: Առկա են լուրեր նաև Թուրք-Հունական լարված հարաբերությունների վերաբերյալ:

ԱՄՆ-ի մասին լուրեր կան գրեթե բոլոր համարներում: Դրանք հիմնականում պայմանավորված են ԱՄՆ-ի կողմից Սիրիայում ծավալվող գործողությունների հետ, Դոնալդ Թրամփի իմպիչմենթի գործով և ԱՄՆ-ի կողմից «Հայող ցեղասպանությունը ճանաչող բանաձև»-ի մասին լուրերով:

- «Ռաշագեյթից՝ Ուկրգեյթ» վերտառությամբ հոդվածում ներկայացվում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի իմպիչմենթի պատմությունը: Նախ ներկայացվում է առաջին իմպիչմենթ հայտարարելու պատճառները և արդյունքը, ապա ներկայացնում է երկրորդ իմպիչմենթի հայտարարելու պատճառների մասին, ներկայացնում է, թե քանի ձայն է պետք և ինչ հետևանքներ դա կարող է ունենալ Դոնալդ Թրամփի համար:
- «Կարծիքների բախում» վերտառությամբ հոդվածում կրկին խոսվում է Դոնալդ Թրամփի իմպիչմենթի մասին և այս անգամ նյութում ներկայացվում է Հանրապետական կուսակցության անդամների, սենատորների և կոնգերականների կարծիքները իմպիչմենթի թեմայով և նշվում է, որ պետք է նաև պարզել արդյո՞ք Բայդենը ԱՄՆ փոխնախագահ եղած ընթացքում Ուկրաինայում միջամտությունների չի դիմել:
- «Փորձարկում են S-400-ը» վերտառությամբ հոդվածում խոսվում է ռուսական S-400-ի փորձարկման մասին, ապա նշվում է, որ մատակարարը Թուրքիայի հետ պայմանավորվածություն ունի նոր համաձայնագիր կնքել: Այդ առիթով ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն կոչ է արել Թուրքիային զերծ մնալ համակարգի օգտագործումից և այն փոխարինել Ամերիկյան Պատրիոտ համակարգերով: Դեմոկրատ Քրիս Վան Հոլլեն էլ անդրադառնալով այս թեմային՝ նշել է, որ ըստ օրենքի պետք էր պատժամիջոցներ կիրառել Թուրքիայի դեմ:

Իրանի մասին լուրերը կապված են ԱՄՆ-Իրան լարված հարաբերությունների հետ կամ էլ Իրանում տեղի ունեցած բողոքի ցույցերի վերաբերյալ, որը կապված էր Իրանում բենզինի գնի թանկացմամբ.

- «Իրանում քաոս է տիրում» վերտառությամբ հոդվածում նշվում է, որ ցույցերը սկսել են բենզինի գնի թանկացման պատճառով, ապա նշվում է, թե ինչու է այն թանկացել և նշվում է տվյալներ ցույցերի

մասնակիցների քանակի, թե քանի քաղաքներում է ընդանում ցույցերը:

- «Իրանում 106 զոհ կա» վերտառությամբ հոդվածում անդրադարձ է կատարվում Իրանում տեղի ունեցող ցույցերի վերաբերյալ: Հոդվածում նշվում է զոհերի կոնկրետ թվի մասին, բայց իշխանությունները հերքում են այդ տվյալները: Հոդվածում նաև նշվում է, որ Իրանում ցույցերի ընթացքում անջատված է ինտերնետ հասանելիությունը և պետությունը դա բացատրում է նրանով, որ դա արել են այլ երկրների կողմից միջամտությունը կանխելու համար:

Ռուսաստանի մասին լուրերը արտացոլվում են ՀՀ-Եվրասիական տնտեսական միության և ՀԱՊԿ-ի շրջանակներում կատարվող իրադարձություններով: Պետք է նաև նշել, որ մշտադիտարկման ընտրված ժամանակահատվածում Ռուսաստանում այլ կարևոր բան տեղի չի ունեցել, քան այդ նիստերը:

Թերթում տեղ է գտել նաև Վրաստանում ծավալված իրադարձությունների մասին նյութեր, որտեղ ներկայացվում են ցույցերի պատճառները և դրանց ընթացքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

6.5. «Իրատես» երկօրյա թերթ

Լույս է տեսնում շաբաթը երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ: Մշտադիրատկվել են թերթի 71(992) համարից մինչև 79(1000) համարները:

Թերթում չկան բռնության կոչ պարունակող խոսքեր, սակայն կան պիտակավորում կամ վիրավորանք պարունակող նյութեր: Պիտակավորումներ կան Ստամբուլյան կոնվենցիայի և Սորոսի մասին հոդվածներում: Իրանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և Սիրիայի մասին առկա են վերլուծական նյութեր: Հաճախակի հանդիպող արտահայտություն է «Փաշիզմը», ինչպես «Իրավունք» եռօրյա թերթում, այնպես էլ «Իրատես» երկօրյա թերթում այս տերմինը ասոցացվում է նացիզմի հետ:

Թերթում տեղ գտած Ստամբուլյան կոնվենցիայի մասին նյութերում կոնվենցիան ներկայացվում է որպես ազգային արժեքներին հակասող, ազգային արժեքները խարխլող, ԼԳԲՏ համայնքի իրավունքները պաշտպանող կոնվենցիա, իսկ գործող իշխանությունները ներկայացվում են որպես Ստամբուլյան կոնվենցիայի պաշտպաններ:

- համարում տեղ գտած «Իսկ պատերազմում կռվում են մինչև վերջ» վերտառությամբ հոդվածը իրենից ներկայացնում է վերլուծական հոդված, որտեղ մեջբերված են կոնվենցիայից դրույթներ, և

ներկայացվում է, թե այդ դրույթների վավերացման դեպքում դրանք ինչ իրավական և սոցիալական հետևանքներ են ունենալու Հայաստանում:

«Բաց հասարակության հիմնադրամների–Հայաստան» մասին.

- համարում տեղ գտած «Սորոսյան ինտերնացիոնալը հիասթափված է և ագրեսիվ» վերտառությամբ հոդվածում նշվում է, որ Սորոսը ցանկանում է, որ Նիկոլ Փաշինյանը իրենից ավելի շատ կախում ունենա և այդ պատճառով ստիպում է նրան անել ոչ պոպուլյար փոփոխություններ, ինչպիսին Ստամբուլյան կոնվենցիան է: Այդ պատճառով նա ավելի է մեծացրել ֆինանսական ներդրումները Հայաստանում դրանով էլ ավելի ակտիվ պահել իր կողմից կառավարվող ՀԿ-ները: Մասնավորապես, նշվում է, որ Սորոսը հայտնել է Նիկոլ Փաշինյանին, որ նա ցանկանում է որպեսզի Հայաստանում փակվի 102–րդ ռուսական ռազմաբազան: Հոդվածում նաև նշվում է, որ կայացել է փակ հավաք Սորոսի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների միջև, որտեղ քննարկվել է նրանց հետագա գործունեությունը:
- համարի «Ասում են» խորագրի տակ գրվում է, որ Ծաղկաձորի Կեչարիս հյուրանոցում կայացել է ԼԳԲՏ ֆորում, որին մասնակցել են բարձրաստիճան պաշտոնյաներ և որի ընթացքում քննարկվել են ԼԳԲՏ համայնքին առնչվող հարցեր: Իսկ օրվա վերջում պաշտոնյաները իրենց ծառայողական մեքենեներով բոլորին տուն են տարել:
- համարի «2019թ նոյեմբերին Իրանը «գործի գցեց» միջուկային գործարքով պարտավորությունները սահմանափակելու մեխանիզմի չորրորդ քայլը» վերտառությամբ վերլուծական հոդվածը Իրանի տարածաշրջանում և Արևմուտքի հետ վարած քաղաքականությանը: Վերլուծականում նշվում է, որ չնայած, որ արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացող ֆոնին Իրանը բարելավվում է իրա հարաբերությունները տարածաշրջանի պետությունների հետ: Անդրադարձ է կատարվում նաև Իրանի միջուկային ծրագրին:
- համարի «2019թ նոյեմբերին Իրանը «գործի գցեց» միջուկային գործարքով պարտավորությունները սահմանափակելու մեխանիզմի չորրորդ քայլը» Հոդվածում ավելի մանրամասն է ներկայացնում Իրանի միջուկային ծրագրի մանրամասները: Սկզբում ներկայացվում է, թե ինչ էր իրենից ներկայացնում Իրանի միջուկային ծրագիրը և ներկայացնում դրա փուլային կարգավորումը:

Թերթի 77 (998), 78 (999), 79 (1000) համարներում առկա «Հայաստա՛ն, ըմբռնի՛ր Լավրովի հայտարարությունները. Ռուսաստանը պահել է իր դիրքորոշումը, բայց հիշեցրել է Արցախ–ԼՂՀ սուբյեկտ լինելը» մեծ վերլուծական հոդված է, որտեղ Ռուսաստանի տարածաշրջանում վարվող քաղաքականության մասին: Հատկապես մեծ անդրադարձ է կատարված Լավրովի դերը Ադրբեջանի հետ բանակցային գործընթացում ներկայացնելուն: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև Հայաստանում ԱՄՆ–ի կողմից ֆինանսավորվող հատուկ լաբորատորիաներին և հատուկ նշվում է, որ դրանք ֆինանսավորվում են Պենտագոնի կողմից նաև նշվում է, որ այդպիսիք կան նաև Վրաստանում և Ադրբեջանում: Հոդվածում նաև նշվում է Տաջիկստանում, Ղրղզստանում և Ուզբեկստանում գործող Չինական լաբորատորիաներին որոնք կառավարվում են Չինաստանի հատուկ ծառայությունների կողմից:

6.6. Ամփոփում

Բոլոր թերթերի հիմնական բովանդակությունը ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ են: Դիտարկված 5 թերթերից երեքը ունեն ընդգծված ընդդիմադիր կեցվածք իշխանություններին («Հրապարակ», «Իրավունք», «Իրատես»), մեկը ունի իշխանամետ կեցվածք («Հայկական ժամանակ»), իսկ մեկը՝ անկողմնական է («Առավոտ»):

- կեցվածք ունեցող թերթերում առավել հաճախ են հանդիպում Սորոսի և Ստամբուլյան կոնվենցիայի մասին բացասական հոդվածներ: «Բաց հասարակության հիմնադրամների–Հայաստան» կամ Ստամբուլյան կոնվենցիայի մասին հոդվածներում նշվում է, որ դրանք վնասում են Հայաստանի ազգային արժեքները, թուլացնում են պետությունը և միտված են միայն ԼԳԲՏ համայնքի իրավունքրի պաշտպանությանը:
- պիտակավորումները և վիրավորական արտահայտությունները հիմնականում ներառված են Սորոսի և Ստամբուլյան կոնվենցիայի մասին հոդվածներում:
- ուղվածություն ունեցող «Հայկական ժամանակ»–ում Սորոսի և Ստամբուլյան կոնվենցիայի մասին լուրեր որպես այդպիսին չկան: Թերթում հիմնականում ներկայացված են իշխանության կատարած փոփոխությունները:
- կեցվածք ունեցող «Առավոտ» օրաթերթում չկան Սորոսի մասին նյութեր, բայց կան Ստամբուլյան կոնվեցիայի մասին հոդվածներ, որտեղ ներկայացված են թե դրական, թե բացասական կողմերը:

Ավելի քիչ տեղ տալով Ստամբուլյան կոնվենցիային և Սորոսին թերթը հնարավորություն է ունցել և հրապարակել է տարբեր, այդ թվում, հարևան Թուրքիայում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ հոդվածներ:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի և Սիրիայի մասին լուրեր կային երեք թերթերում՝ «Հայկական ժամանակ»-ի, «Առավոտ»-ի և «Իրատես»-ի համարներում: Ի տարբերություն «Իրավունք»-ում տեղ գտած միջազգային լուրեր այս երեքը նպատակ ունեին ներկայացնելու հենց միջազգային լուրերը:

VII. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Այսպիսով մշտադիտարկման ժամանակահատվածում դիտարկվել է մեկ ռուսական հեռուստածրագիր, վեց հայաստանյան հեռուստահաղորդումներ, հինգ անուն տպագիր մամուլ և բազմաթիվ էլեկտրոնային լրատվականների, սոցիալական հարթակների հրապարակումներ: Ամփոփելով այդ մշտադիտարկման արդյունքները կարելի է հիմնականում եզրահանգել որ.

- հեռուստաեթերով տարիներ շարունակ թիրախավորվում է նույն թեման՝ Ուկրաինան և ամեն տարի այն ավելի մեծ ծավալներ և ռեսուրսներ է ներառում: Պիտակավորվում են օրվա ցանկացած իշխանություն, հիմնականում խոսքը քննադատական չէ, այլ հենց վիրավորական, պիտակավորող և կարծրատիպեր ձևավորող:
- ինչպես տպագիր մամուլը, այնպես էլ հետուստատեսությունը զերծ է ռուսաստանյան հեռուստածրագրերի ազդեցությունից և հիմնականում անդրադառնում են տվյալ օրը երկրում կատարվող իրադարձություններին: Ավելի քիչ են միջազգային հարաբերություններին կամ հարևան երկրներում տեղի ունեցող զարգացումների մասին հրապարակումները կամ մեկնաբանությունները:
- զարգացումներն ու իրադարձությունները հիմնականում ներկայացվում են բավականին միակողմանի, երբեմն ծայրահեղ տեսանկյուններից:
- ենթադրությունները որպես հաստատված փաստ ներկայացնելը, ատելության խոսքն ու հանրային կեղծ կարծիքի ձևավորումը հաճախ օգտավգործվում է որպես գործիք:
- խոսքն ու պիտակավորումը հասել է աննախադեպ ծավալների ի տարբերություն նախորդ տարիների:

VIII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՄԱՐՅԱ «ԿՈՎԿԱՍԻ ԳԵՐՈՒՀԻ»
(ԼՀԿ-Ի ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽՈՐԱՑՈՂ ԱՆՋՐՊԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԼՀԿ-Ի ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ)
ԼՀԿ-ն կարող է ճչալ, բողոքել, բայց դա կովկասյան հին ավանդույթ է:

ԼԱՎ ԷԼ ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆ
(ՆԻԿՈԼԻ ԿՈՂՄԻՑ՝ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ)

Կոռուպցիայի դեմ պայքարի կոմիտեից հայտնում են, որ **Նիկոլի կառավարությունը** նախորդներին **չի զիջում** հարկատուների փողերը **ասֆալտին քսելու** պահով, ուղղակի ձեռքի հետ էլ **ԼԳԲՏ-ներին է ֆինանսավորում,** որ **ասֆալտի համը դուրս չգա:**

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«Պարո՛ն Պետրոսյան, ի՞նչ եք խոսում, ասում է՝ դուք կուզենա՞ք ձեր ընտանիքում... էդ ի՞նչ անձնավորված բաներ են, մի հատ էլ քֆուր դնեիք քվեարկելու վրա»:
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

– Նիկոլ ջան, թարգի՛ր, հիմա նույնիսկ ես քեզանից գլուխ չեմ հանում:
Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյան
acer
www.iravunk.com

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

(երրորդ մոնիթորինգի արդյունքներ)

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am